Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՀԱՅԿՈՈՊ

9648

ԿՈՒԼՏ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ
ՍԵՐԻԱ № 1

Ա. ԿԱՖՄԱՆ

# ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ




334
4-38

ՊԵՏՀՐԱՏ
1931

334
4-38
40036


Ա. ԿԱՑՄԱՆ

# ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ

№ 2001
2010


ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1931

ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
(15398-57)
23546-60

Հրատ. № 1560
Գրառեպ. № 6192 (բ). Պատ. № 1507. Տիրաժ 3.000
Պետհրատի տպարան Երևանում.

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՍԿԱՅԱԿԱՆ ԾԱՎԱԼՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԽՍՀՄ-ն, ինչպես շեշտեց XVI կուսհամագումարը Համ Կ(բ)Կ Կ Կ-ի հաշվետվության վերաբերյալ բանաձևում, մտել է սոցիալիստական շինարարության հսկայական ծավալման շրջանը։

ԿԿ-ի ճիշտ քաղաքականությունն ապահովել է սոցիալիստական ինդուստրիայի հզոր թափը, բանվորական մասսաներում առաջ է բերել արտադրական խանդավառության հսկայական վերելք, որը հնարավորություն է տվել կուսակցությանն իր առաջ դնելու հնգամյակը չորս տարում իրագործելու խնդիրը։ Սոցիալիստական շինարարության բնագավառում կուսակցության ձեռք բերած տեմպերը Խորհրդային Միությանը հնարավորություն են տալիս պատմական ամենակարճ ժամանակաշրջանում տեխնիկական-տնտեսական տեսակետից հասնել ու անցնել առաջավոր կապիտալիստական երկրներից։

Ինդուստրացման արագ տեմպը հիմք է ստեղծել գյուղատնտեսությունը սոցիալիստորեն վերակառուցելու համար։ Հացահատիկային խորհտնտեսությունները այս տարի արդեն պետք է տան 100 միլիոն փթից ավելի ապրանքային հաց։ Կոլտնտեսական հնգամյակն ընթացիկ տնտեսական տարում գերակատարված է։ Կոլտնտեսությունները այս տարի պետք է տան արդեն ավելի քան կես միլիարդ ապրանքային հաց։

Ինչպես հայտնի է, առաջին տնտեսական տարվա արդյունքներն ապացուցեցին, որ մեր շինարարության տեմպերը հնգամյակի տեմպերից բարձր են։ Այդ արդյունքները հիմնովին ջախջախեցին այն աջ ոպորտունիստների վողորմելի դատողությունները, վորոնք վախենում եյին դժվարություններից, վորոնք քարոզում են «նեղ տեղերին» հավասարվել, կուլակի հետ խաղաղ կերպով կենակցել և ինդուստրացումը չընդարձակել։ Կուսակցությունն ու չանվոր դասակարգը հարվածեցին աջերի անձնատուր լինելու դիրքավորումները, գործնականում իրագործելով ծավալված սոցիալիստական հարձակման հաղթական ծրագիրը։ Կուսակցությունը նախատեսել և վճռական կերպով կենսագործում է 1929—30 թ. տնտեսական շինարարության ծրագիրը այնպիսի չափերով, վորոնք զգալի կերպով գերազանցում են հնգամյա պլանի սկզբնական նախատեսումները։

Համկ (բ) կ կ կ-ի նոյեմբերյան պլենումի հաստատած պլանով ժողովրդական տնտեսության հիմնական ներդրումները հանդեպ 1928—29 թ. 8,5 միլիարդ ռուբլու և հնգամյա պլանի 10,200 միլիոն ռուբլու, պետք է կազմեն 13 միլիարդ ռուբլի։ Դրա հետ միասին կուսակցությունը նախատեսել է արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքի իջեցում 11 %-ով, աշխատանքի արտադրողականության բարձրացում 25 %-ով, ունենալով անվանական աշխատավարձի աճում 9 %-ով, և ռեալ աշխատավարձի աճում՝ վոչ պակաս, քան 12 %։

Թվերն ու փաստերը ցույց են տալիս, որ մեր ժողովրդական տնտեսության զարգացումն ընթացիկ տնտեսական տարվա առաջին կիսամյակի ընթացքում



զգալի կերպով գերազանցեց [illegible] ների զարգացման տեմպերին։ [illegible] ճում է։ Սակայն [illegible] պետք է [illegible] նշել, վոր այդ [illegible] հաստատված նախատեսված ծրագրի հետ անբավարար են։ Այսպես, 1929—30 տնտես. տարվա 6 ամսվա ընթացքում արդյունաբերության ընդհանուր արտադրանքի աճումը համեմատած անցած տարվա համեմատ 29,4 % մինչդեռ պետք եր ունենալ 31,30 %-ի աճում։ Բացի դրանից ինքնարժեքի իջեցումը [illegible] ընդհանուր պլանով նախատեսված 11 %-ի մինիմումի փոխարեն 6 %-ի է։ Հետևապես անհրաժեշտ է [illegible] կուսակցության և ամբողջ բանվոր դասակարգի ուժերը [illegible] բոլշևիկյան մոբիլիզացիա կատարել՝ վճռական բեկում մտցնելու ընթացիկ տարվա արդյունաբերական պլանի իրագործման, նրա կատարման և գերակատարման համար։

Պետք է ծավալել [illegible] աշխատանքը ամբողջ ճակատում, ի շարս դնել նաև [illegible] ցիայի գծով։

## ՎՈՉ ՊԱԿԱՍ, ՔԱՆ 12 %-ՈՎ

Կուսակցության կկ-ի նոյեմբերյան պլենումը առանձնապես ընդգծեց «1929—30 թ. ռեալ աշխատավարձի աճումը վոչ պակաս, քան 12 %-ով ապահովելու [illegible] րի կարևորությունը, վորի համար պահանջվում է շարունակել արդյունաբերական ապրանքների գների իջեցման ընթացքը և պահանջվում են [illegible] ային, պրոֆեսիոնալ, կոոպերատիվ և կուսակցական բոլոր կազմակերպությունները լարված աշխատանք կատարեն արդյունաբերական գների [illegible]

քումը լավ կազմակերպելու, սննդի աղբյուրները ռացիոնալ կերպով օգտագործելու և բաշխելու, սննդանյութերի պահպանությունն ու վերամշակումը լավացնելու գործում, մսեղենի և կաթնեղենի ավելի լիակատար կազմակերպման գործում և այլն: Պարենավորման հաշվեկշռի լարվածությամբ այդ խնդիրը դառնում է առանձնապես անհրաժեշտ և անհետաձգելի մի խնդիր, որը կարելի չէ կատարել միմիայն բանվոր դասակարգի և նրա բոլոր կազմակերպությունների ուժերի մեծագույն մոբիլիզացիայով»:

Համ Կ(բ)Կ ԿԿ-ն այս առաջադրությունը մի անգամ ևս շեշտել է 1930 թ. մայիսի 15-ի իր որոշման մեջ:

Քաղաքի և գյուղի աշխատավոր մասսաների պարենավորման գործն իրոք բարելավելու, աշխատավորների կենցաղն արմատապես վերափոխման յենթարկելու, բանվորների ռեալ աշխատավարձի մակարդակը բարձրացնելու, միլիոնավոր գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման հետ կապված առաջացող նոր պահանջները բավարարելու համար կուսակցության կողմից մղվող պայքարն անսահման մեծացնում է սպառողական կոոպերացիայի սիստեմի պատասխանատվությունը հնգամյակով և 1929—30 թ. վերահսկիչ թվերով նրա վրա դրված հսկայական տընտեսական խնդիրներն իրագործելու բնագավառում»:

Սպառողական կոոպերացիան ստանձնել է չափազանց պատասխանատու մի խնդիր, որի հաջող կատարումից մեծապես կախված է նաև նաև ամբողջ տընտեսական պլանի կատարումը: Յերբեք չպետք է մոռանալ, որ ռեալ աշխատավարձի բարձրացումը սերտորեն կապված է աշխատանքի արտադրողականու-



թյան բարձրացման հետ, առանց որի դժվար է հասնել արդյունաբերության արտադրանքի նախատեսված աճմանը, նրա որակի բարձրացմանը և ինքնարժեքի իջեցմանը: Կոոպերացիան պետք է չմոռանա, որ հնգամյա պլանի համաձայն ռեալ աշխատավարձի աճումը նախատեսված է 70 %-ի չափով և որ հնգամյակի յերկրորդ տարում տեղի ունեցած թերակատարումն ընդհանրապես խիստ ծանր կերպով է անդրադառնալու ամբողջ հնգամյա պլանի կատարման վրա: Սպառողական կոոպերացիան պարտավոր է շարունակ հիշելու, թե որքան խոշոր նշանակություն ունի նա վերակառուցման շրջանում, յերբ Խորհրդային Միության ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ տեղի յե ունենում արմատական բեկում և ձևափոխում: Մենք սոցիալիզմ ենք կառուցում: Իսկ այդ կառուցումն առանց աշխատավոր բնակչության լիակատար կոոպերացման, առանց կոոպերացիայի ամբողջ աշխատանքի որակը բարձրացնելու, միտք չունի: Հարկավոր է այստեղ հիշել Վլադիմիր Իլյիչի՝ «Կոոպերացիայի մասին» հոդվածի հետևյալ խոսքերը.

«Ճիշտն ասած, մեզ մնում է «միմիայն» մեկ բան մեր բնակչությունն այնքան «քաղաքակիրթ» դարձնել, որ նա կարողանա հասկանալ կոոպերացիային ամբողջովին մասնակցելու օգուտները և կանոնավորի այդ մասնակցությունը: Միմիայն այդ: Սոցիալիզմին անցնելու համար մեզ այլ տեսակի իմաստություններ հարկավոր չեն»:

Յեվ ապա՝

«Այժմ մենք իրավունք ունենք ասելու, որ կոոպերացիայի հասարակ աճումը մեզ համար համատեղելի յե ... սոցիալիզմի աճման հետ...»:

Լենինի կոոպերատիվ պլանի նշանակությունն ու մեծությունը այն է, վորպեսզի մենք պրոլետարական պետության կողմից կոոպերացիային հասցվող ուժեղ աջակցության կարողանանք կոոպերացման միջոցով մանր ապրանքային տնտեսությունը սոցիալիստական շինարարության մեջ քաշելու խնդիրը, նրա վերակառուցման և հանրայնացման խնդիրը։ Լենինի կոոպերատիվ պլանը սոցիալիստական շինարարության հզոր զենքն է, վոր կարող է ավելի արագ կերպով փոխարկել ագրարային յերկրի մեր սկսած ինդուստրացումը։ Կուսակցությունը վոչ մի քայլ յետ չի նահանջի այդ պլանը կատարելուց։

Բնակչությունը կոոպերացման յենթարկելու բնագավառում մենք 1928—29 թ. շատ զգալի հաջողություններ ձեռք բերինք։ Սպառողական կոոպերացիայի փայատերերի քանակը 1930 թ. հուլիսին՝ 1928 թ. հոկտեմբերի 1-ի 22,5 միլիոնի դիմաց հասավ 43 միլիոնի։ Ինչպես հայտնի յե, հնգամյա պլանով նախատեսվում եր 1932—33 թվի վերջին ընդգրկել քաղաքային բնակչության 70%-ը և գյուղական բնակչության 40%-ը։ Սակայն արդեն հնգամյակի առաջին տարում սպառողական կոոպերացիան ուժգին կերպով առաջ շարժվեց, մոտենալով հնգամյա պլանի վերջին տարվա թվերին։ Զգալի չափով մեծացավ սպառողական կոոպերացիայի մանրածախ շրջանառությունը, կազմելով XVI կուսհամագումարին 12 միլիարդ ռուբլի։ Արդեն ընթացիկ տնտեսական տարվա վերջին մենք համարյա ամբողջովին կատարելու յենք կոոպերացման հնգամյա պլանը։

Սակայն սխալ կլիներ կարծել, վոր խնդիրը ամբողջովին վերաբերում է քանակին։ Իհարկե փայատերերի քանակի աճման նշանակությունը վոչ վոքի չի կարող ժխտել։ Սակայն այդ դեռ բավական չե։ Վլադիմիր Իլյիչը նույն այդ «Կոոպերացիայի մասին» հոդվածում ասել է.



«Այժմ ամբողջ խնդիրը նրանում է, վոր մենք կարողանանք միացնել այն հեղափոխական թափը, այն հեղափոխական խանդավառությունը, վոր մենք արդեն հայտաբերել ենք, և հայտաբերել ենք բավականաչափ և պսակել ենք լիակատար հաջողությամբ,— կարողանանք միացնել նրան (այստեղ յես համարյա պատրաստ եմ ասելու) խելացի և գրագետ առևտրական դառնալու հետ, վորը միանգամայն բավարար է լավ կոոպերատորի համար։ Առևտրական դառնալ կարողանալ յես հասկանում եմ կուլտուրական առևտրական դառնալ։ Այդ թող ականջներին գինդ անեն ռուս մարդիկ կամ ուղղակի այն գյուղացիները, վորոնք կարծում են, թե «յեթե իրենք առևտուր են անում, նշանակում է կարողանում են առևտրական լինել»։ Այդ միանգամայն սխալ է։ Նրանք առևտուր են անում, սակայն կուլտուրական առևտրական լինելուց դեռ շատ հեռու յեն։ Նրանք այժմ առևտուր են անում ասիաբար, իսկ լավ առևտրական դառնալու համար պետք է առևտուր անել յեվրոպացու պես։ Իսկ դրանից նրանք հեռու յեն մի ամբողջ դարաշրջան»։

Այսպիսով Վլադիմիր Իլյիչը առանձնապես ընդգծել է առևտուր անել կարողանալու, կուլտուրական առևտրական դառնալու ամբողջ նշանակությունը։ Ուրիշ խոսքով՝ Վլադիմիր Իլյիչը մատնանշել է աշխատավոր սպառողին ամենից լավ սպասարկելու, կոոպերա-

տիվ առևտուրը բնակչությանը խիստ մոտեցնելու, ամբողջ առևտրական գործը ռացիոնալ ձևով դնելու և ճիշտ ու կազմակերպված լավ կարգավորված առևտրի միջոցով ապրանքներն եժանացնելու ամբողջ կարևորությունը։

Պետք է ամբողջ վճռականությամբ շեշտել, վոր մինչև այժմ սպառողական կոոպերացիան կուսակցության առաջադրած խնդիրը չի կատարել, վոր նրան չի հաջողվել մանրածախս գներն իջեցնել։ Այդ դեռ բավական չէ, մի շարք ապրանքների վերաբերյալ մենք նկատում ենք նաև գների աճում։ Սպառողական կոոպերացիան արդեն հնգամյակի առաջին տարում անպատրաստ եր առևտրի մեջ մասնավորին արագ կերպով փոխարինելու։ Հնգամյակով 1932—33 թ. մասնավոր առևտուրը ՌՍՖԽՀ-ում պետք է կազմեր մանրածախս առևտրի 9%-ը։ Սակայն նա 1927—28 թ. 23 %-ի դիմաց արդեն 1928—29 թ. կազմում եր ընդամենը 12%։ Այլ խոսքով, մասնավոր առևտուրը կըրճատվեց ավելի քան յերկու անգամ։ Այդ, իհարկե սպառողական կոոպերացիային պարտավորեցնում եր կատարել մի մեծ խնդիր— լրացնել այն տեղը, վորն առաջ գրավում եր մասնավորը։ Կոոպերացիան այդ խնդիրը չկարողացավ կատարել։

Համ Կ (բ) Կ ԿԿ-ի 1930 թ. մայիսի 15-ի վորոշումն ասում է.

«Սակայն չնայած բնակչության կոոպերացման զգալի աճմանը, առևտրական ցանցի և հասարակական սննդի ու հաց թխելու ցանցի ընդլայնումը, մանրածախս առևտրում արդեն 12 միլիարդ ռուբլու հասնող առևտրական շրջանառությունների ընդար-



ձակումը, սպառկոոպերացիայի աշխատանքի կազմակերպչական մեթոդներն ու տեմպերը շարունակում են խորհրդային շինարարության ընդհանուր տեմպերից յետ մնալ։ Լայն գործածության ապրանքների գների ցածրացման վերաբերյալ կարևորագույն առաջադրությունների թույլ կատարումը, աշխատանքում շարունակվող ինքնահոսը, առևտուր անել և սպառողին սպասարկել չկարողանալը, ապրանքային ֆոնդերը շրջանառության մեջ դնել չկարողանալը, մերձքաղաքային տնտեսությունների կազմակերպման թույլ աշխատանքը, աշխատանքի բյուրոկրատացումը և հասարակայնության չափազանց թույլ ծավալումը, իսկական սոցիալիստական մրցման և հարվածայնության բացակայությունը, կոոպերատիվ կադրերի թուլությունն ու ապարատի՝ խորթ տարրերով աղտոտվելը,— այս ամենը պահանջում են, վոր կուսակցական, արհեստակցական և խորհրդային կազմակերպությունները խիստ ուշադրություն դարձնեն կոոպերատիվ սիստեմի ամբողջ աշխատանքի բարելավման խընդիրներին»։

Մենք ունենք գների հետևյալ դրությունը. 1927 թ. տեղի ունեցավ հասարակական լայն կամպանիա գները 10 տոկոսով իջեցնելու համար։ Այդ ժամանակից սկսած դեպի սոցիալիստական շինարարության այդ կարևոր բնագավառն ունեցած ուշադրությունը մի փոքր թուլացավ, և այդ այն հետևանքն ունեցավ, վոր գները բարձրացան։ Յեթե 1913 թ. գըներն ընդունենք 100, այդ դեպքում նրանք 1926—27 թվին կազմում եյին 191։ 1927—28 թ. այդ գներն իջան մինչև 184, իսկ 1928—29 թ. նորից բարձրացան և

կատարվեցին, որոնց 192։ 1929—30 տնտեսական տարվա ամբողջ [illegible] (նույնիսկ [illegible]) ընթացքում ապրանքների [illegible] գները հասնում 196-ի [illegible]։ [illegible] նաև [illegible] արտադրանքներ-րի և մթերքների [illegible] (այսպես կոչված [illegible] ինդուստրիային [illegible])։ Այդ [illegible] արժեքով հաշվարկված [illegible] տնտեսական տարվա [illegible] համարյա [illegible] և [illegible]

[illegible] կուսակցության [illegible] ծակատարվել [illegible] ապրանքների [illegible] քը XVI կուսհամագումարի [illegible] համագումարի, [illegible] հանձնարարեց Համ. Կ(բ) Կ. Կենտկոմ «կոոպերացիայի [illegible] ընդլրանացնել [illegible] աշխատավորների [illegible] [illegible] աշխատանքը բարելավելու [illegible] գծով։

## ԳՆԵՐԻ ԻՋԵՑՈՒՄԸ

Գների այն իջեցումը, վորը մենք կատարել ենք մի շարք ապրանքների վերաբերյալ, իրագործված է կոոպերատիվ [illegible]։ Իսկ կոոպերացիան [illegible] միջոցները [illegible] կոոպերացիայի չի ընթացել աշխատանքի [illegible] մակարդակը բարձրացնելու [illegible]

Մեր կոոպերացիայում [illegible] թերություններ կան։ [illegible] թերությունների շարքը [illegible] վոր դեռևս [illegible] կոոպերատիվ բանջարանոցների [illegible] արտադրությունը։ Բանվոր-



ների սննդի մեջ չափազանց մեծ տեղ է գրավում բանջարեղենը։ Յեվ ահա, չնայած բոլորի կողմից հանաչված այդ ճշմարտությանը, սպառողական կոոպերացիան թույլ կերպով է ծավալում սեփական բանջարանոցներ, կաթնատնտեսական ֆերմաներ և այլն ծավալելու աշխատանքը։ Թույլ կերպով է տեղի ունենում նաև անասնապահական տնտեսությունների շինարարությունը։ Վերջին հաշվով այդ ամենն այն հետևանքըն է ունենում, վոր բանվորն ստիպված է լինում գյուղատնտեսական մթերքները գնելու մասնավորից, վորի մոտ գները, իբրև որենք, յերկու և յերբեմն էլ յերեք անգամ բարձր են լինում կոոպերատիվի գներից։ Անցյալ տնտեսական տարում Դոնավազանի բանվորները (վորտեղ շատ հանքագործներ և մետաղագործներ են ապրում), ստիպված յեղան գյուղատնտեսական բոլոր մթերքների մեկ յերրորդից ավելին գնել մասնավորից։ Այդ մթերքները դրամի վերածելով կազմում են հարյուր հազար և նույնիսկ միլիոն ռուբլիներ, վոր բանվորները Դոնավազանի կոոպերացիայի հանցանքի հետևանքով ավելորդ տեղը վատնել են, այն կոոպերացիայի, վորը չի կարողացել կարգավորել գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, չի կարողացել ծավալել գների իջեցման և բանվորական սպառողին հաջող կերպով սպասարկելու պայքարը։

Մեր կոոպերացիայի թերությունները չափազանց վառ կերպով նկարագրված են XVI կուսհամագումարում ընկ. Ստալինի արած զեկուցման մեջ։

Ընդգծելով, վոր բանվորների ռեալ աշխատավարձը, հաշված սոցապահովագրությունն ու ոգուտներից բանվորների կենցաղի բարելավման ֆոնդը մըտ-

նող հատկացումները, նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ աճել է մինչև 167 %, ընկ. Ստալինն ասում է.

«Այդ, իհարկե, չի նշանակում, թե արդեն կատարված է այն ամենը, ինչ անհրաժեշտ է ռեալ աշխատավարձը լուրջ կերպով բարձրացնելու համար, թե չի կարելի ռեալ աշխատավարձն ավելի բարձր աստիճանի հասցնել։ Յեվ յեթե այդ բանը չի արված, դրանում ընդհանրապես մեղավոր է մեր հայթայթիչ ապարատի բյուրոկրատիզմը, ամենից առաջ և մանավանդ սպառողական կոոպերացիայի բյուրոկրատիզմը։ Պետպլանի տվյալների համաձայն ներքին առևտրի հանրայնացված սեկտորը 1929—30 թ. ընդգրկում է մեծածախսի ավելի քան 99 %-ը, իսկ մանրածախսի ավելի քան 89 %-ը։ Այդ նշանակում է, վոր կոոպերացիան սիստեմատիկ կերպով հարվածում է մասնավոր սեկտորին և առևտրի բնագավառում դառնում է մոնոպոլիստ։ Այդ, իհարկե, լավ է։ Բայց վատ է այն, վոր այդ մոնոպոլիան մի շարք դեպքերում տեղի յե ունենում ի վնաս սպառողների։ Դուրս է գալիս, վոր չնայած առևտրում իր ունեցած համարյա մոնոպոլ դրությանը, կոոպերացիան գերադասում է բանվորներին մատակարարել ավելի «արդյունավետ» ապրանքներով, վորոնք մեծ ոգուտներ են տալիս (գալանտերեյա և այլն), և խուսափում է նրանց մատակարարել քիչ «արդյունավետ» ապրանքներ, թեև դրանք բանվորների համար ավելի անհրաժեշտ են (գյուղատնտեսական մթերքներ)։ Դրա հետ կապված՝ բանվորները հարկադրված են գյուղատնտեսական մթերքների իրենց կարիքների 25 %-ը ձեռք բերել մասնավոր շուկայում՝ բարձր գներով։ Յես արդեն չեմ խոսում այն մասին, վոր կոոպերացիայի ապարատն ամենից ավելի մտահոգված է հաշվեկշռով, վորի համար դժվարությամբ է իջեցնում մանրածախս գները, չնայած ղեկավար կենտրոնների կատեգորիկ դիրեկտիվներին։ Դուրս է գալիս, վոր կոոպերացիան տվյալ դեպքում գործում է վոչ թե իբրև սոցիալիստական սեկտոր, այլ իբրև յուրորինակ մի սեկտոր, վորը վարակված է ինչ-վոր նեպմանական վոգով։ Հարց է առաջ գալիս, թե ում է հարկավոր այդպիսի կոոպերացիան և նրա մոնոպոլիայից ինչ ոգուտ ունեն բանվորները, յեթե նա չի կատարում բանվորների ռեալ աշխատավարձը լուրջ կերպով բարելավելու խնդիրները։

ՀԱՄԿԽ-ն, Ցենտրոսայուզը, Կենտրբանսեկցիան իրենց դիմումի մեջ ստիպված եյին շեշտել, վոր սպառողական կոոպերացիայի կազմակերպությունները դեռևս հարկավոր չափով չեն շարժվել, վոր նրանց աշխատանքի տեմպերն իրենց բանջարանոցների, կաթնատնտեսական և անասնաբուծական և այլ ֆերմաների շինարարության մեջ չափազանց դանդաղ են։ Կոոպերացիան բավարար չափով չի ոգտագործել վերոհիշյալ շինարարության համար միջոցներ ստանալու բոլոր աղբյուրները, իսկ այդ բանն, իհարկե, խոշոր արգելք է հանդիսանում գյուղատնտեսական մթերքների լայն արտադրության գործին։

## ԹԵՐԱԿԱՏԱՐՈՒՄՆԵՐԸ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՃԱԿԱՏՈՒՄ

Վոչ պակաս խոշոր թերություն է նաև մեր սպառողական կոոպերացիայի դանդաղաշարժությունն ու

անձկունությունը։ Այստեղ կարելի յե բազմաթիվ ցուցադրական փաստեր առաջ բերել։ Մանրածախս առևտրի ռացիոնալացումը տեղի յե ունենում չափազանց դանդաղ, նա արդյունաբերության մեջ տեղի ունեցող ռացիոնալացումից յետ ե մնում։ Ներկայումս սպառողական կոոպերացիային առաջարկված ե պարտադիր կարգով անցկացնել ռացիոնալացնող ձեռնարկումների անհրաժեշտ մինիմում։ Ամենքին պետք ե պարզ լինի, վոր սպառողին լավագույն կերպով սպասարկելը ներքուստ կապված ե ռեալ աշխատավարձի աճման հետ։ Դժբախտաբար այս բանը յուրացրել են մեր վոչ բոլոր կոոպերատիվները, վորոնք շարունակում են առևտուր անել, Վլադիմիր Իլյիչի բառերով արտահայտած, վոչ թե յեվրոպացու պես, այլ ասիաբար։

Որինակ, Ուկրաինայում բանվորական կոոպերատիվներից վոչ մեկը, վորոնց թվում նաև ամենախոշորները, պարտադիր ռացմինիմումը չեն կատարել։ 1930 թ. հունվարի 1-ին վոչ բոլոր տեղերում անցկացվեց անընդհատ առևտուր և առևտրական շաբաթ։ Արտեմովսկի շրջանի Լիսիչանի բանվորական կոոպերատիվը բանջարանոցային շուկան ընդգրկեց ընդամենը միմիայն 13 $^0/_0$-ով։ Սորմովոյում ԿԲԿ-ի խանութների և կրպակների մոտի հերթերը սովորական յերևույթ են։

Սիբիրի կոոպերացիայի յոթ միությունների տվյալների համաձայն 1930 թ. հունվարի 1-ին 1.900 կրպակներից անընդհատ աշխատանքի յեն անցել միմիայն 38-ը։ Միմիայն 98 խանութ յերկարացրին առևտրի ժամերը, մինչդեռ այդ ժամանակ ձեռնարկությունները հիմնովին վերածվեցին անընդհատ արտադրական շաբաթի։



Յեվ վերջապես Մոսկվան, վորը թվում եր, թե աշխատավորների սպասարկման համար ամենալավ որինակը պետք ե հանդիսանա։

Սոկոլնիկյան ռայոնի սպառողների ընկերությունը վորոշում ե մթերքները ուղարկել տները։ Ոգտակար մի նախաձեռնություն։ Սակայն յերբ սկսեցին ստուգման յենթարկել տներից մեկը տարվող մթերքները, պարզվեց, վոր մեր կոոպերատիվները չափազանց խայտառակ վերաբերմունք են ունեցել դեպի ռացիոնալացման այդ կարևոր նախաձեռնությունը։ Մի տան բնակիչների ընդհանուր ժողովում, վորտեղ յերեք քառորդ մասը բանվորներ եյին, Սոկոլնիկովի սպառողների ընկերության ներկայացուցիչը հավատացնում եր, վոր մթերքները տները տանելու համար կվերցվի վոչ ավելի քան 2 և կես $^0/_0$. սակայն հենց վոր մթերքներ տները տանելու բազա բացվեց, այն ժամանակ առանց վորևե բացատրության սկսեցին սպառողներից վերցնել 5 $^0/_0$։ Դրա հետևանքն այն յեղավ, վոր քիչ աշխատավարձ ստացող բանվորներն ստիպված յեղան բազայի կողմից մատուցվող ծառայությունից հրաժարվել։ Լավ չեր դրված նաև հենց մթերքները տեղ հասցնելու գործը։ Ձուն, սելյոդկան և ալյուրը սպառողները միշտ մի քանի որ ավելի ուշ եյին ստանում, քան կոոպերատիվի մյուս փայատերերը։ Մթերքները մեծ մասամբ փչացած եյին լինում։ Բազան հաճախ բանջարեղենը դեն եր ածում, վորովհետև սպառողը հրաժարվում եր նրանցից։

Նման վերաբերմունքը դեպի սպառողը այլ կերպ չի կարելի անվանել, քան բյուրոկրատիզմ։ Ինքը կենտրոնմիությունը խորհրդի XX նստաշրջանի իր տեսու-

23546-60
15398-57
Гос. публ. библиотека ՀՍԽՀ – ССРА им. А. Мясникяна ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

թյան մեջ պետք ե խոստովանել, վոր բյուրոկրատիզմում մեղադրվելը կոոպերատիվ ճակատի շատ բնագավառներում անպայման ունի իր ռեալ հիմքը։ Իշխանությունների և հասարակական կազմակերպությունների հովանավորության տակ կատարվող աշխատանքի պայմանները՝ մեծ քանակությամբ զանազան տեսակի ապրանքներ չունենալու պարագայում՝ սպառողական սիստեմին սովորեցնում են անպատասխանատու վերաբերմունք ունենալ դեպի սպառողի կարիքները»։

Չափազանց մեծ սխալ գործած կլինեինք, յեթե կոծկեինք այն թերակատարումներն ու դասակարգային այլանդակությունները, վորոնք հայտաբերվել են վերջերս։ Մենք վկա յենք յեղել դասակարգային ռելսերից սայթաքելուն, մի շարք կոոպերատիվ աշխատողների քայքայման, մասնավորի հետ կապ հաստատելուն, դեֆիցիտային ապրանքները սպեկուլյանտներին վաճառելուն, դիֆերենցիալ փայավճար մտցնելու ժամանակ դասակարգային հստակ գծի բացակայության։ Պետք ե խոստովանել, վոր բանվորական կոոպերացիան մի շարք տեղերում իր մեջ ունի հայտնի «աստրախանշչինայի» նման ինչ-վոր մի բան, իր մեջ ունի ամենանեղ գործամոլության տարրեր։ Ահա օրինակ Սվերդլովի կենտրբանկոոպը։ Անցած տարվա տասն ամսվա ընթացքում նա իր հովանու տակ առավ 500 մասնավոր առևտրականից ավելի, վորոնց հետ ունեցած շրջանառությունը կազմում եր համարյա մեկ միլիոն ռուբլի։ Սվերդլովի կենտրբանկոոպը վոչ միայն մասնավորներից ամեն տեսակի ապրանքներ եր գնում, այլև նրանց վաճառում եր ահագին քանակությամբ



գարի, յերկաթ, մանուֆակտուրա, ամանեղեն, պատրաստի հագուստ և այլ բաներ։ Նույն այդ Ուրալում Նադեժդինոյի կենտրբանկոոպը ցույց տվեց ամենանեղ, ամենաանսկզբունք գործամոլության մի օրինակ։ Նրա հետազոտման ժամանակ պարզվեց, վոր բանվորական ընտանիքի բյուջեյի ընդգրկումը տարեցտարի ընկնում ե և կազմում ե ընդամենը 62%։ Ընդհակառակն, ապրանքների վերադիր գները, մանավանդ գյուղատնտեսական ապրանքներինը, աճում են վոչ թե օրեցօր, այլ ժամ առ ժամ։ Անցած տարվա 11% միջին վերադիր գինը թռավ արդեն 15%-ի, իսկ գյուղատնտեսական ապրանքների վերադիրները փոխանակ տարվա սկզբի 9%-ի, 1930 թ. հունվարի 1-ին աճեցին համարյա 15%։ Նադեժդինոյի կենտրոնական բանկոոպի ամբողջ աշխատանքի նպատակն ե յեղել վորքան կարելի յե շատ վաստակ ունենալ ապրանքների, կերակուրների և այլն վորակը վատացնելով։ Դա այն հետևանքն ե ունենում, վոր ԿԲԿ-ի անցած տարվա ունեցած ընդհանուր յեկամուտը սահմանված նորմաներից յերեք անգամ ավելի յե աճել։

Հասկանալի յե, վոր այսպիսի քաղաքականությունը չի կարելի այլ կերպ անվանել, քան բացարձակ օպորտունիզմ գործնականում, քան աջ թեքման ամենավառ արտահայտություն։ Սվերդլովսկի, Նադեժդինոյի և մեր բանվորական մի շարք այլ կոոպերատիվների օպորտունիստական քաղաքականությունը աշխատավարձի ռեալ մակարդակը բարձրացնելու ամենաուժեղ խոչընդոտներից մեկն ե։

Կարելի յե բերել այդպիսի բազմաթիվ փաստեր։ Դրանք բավական ցայտուն կերպով վկայում են, վոր

մեր վրա բոլոր կոոպերատիվներն են հասկացել ընթացիկ տնտեսական տարվա առաջին կիսամյակում մանրածախ գները 2%-ով իջեցնելու վերաբերյալ կուսակցության վորոշման և կառավարության դիրեկտիվի ամբողջ կարևորությունը։

Այդ ցուցումները չեն կատարվել. ընդհակառակն, ինչպես մենք տեսանք բազմաթիվ օրինակներում, շատ կոոպերատիվներ ապրանքները թանգացնելու բացարակ քաղաքականություն են վարել։ Այդ նշանակում է ուղղակի խեղաթյուրել կուսակցական դիրեկտիվները. անհրաժեշտ է անխնա հարված հասցնել այդ խեղաթյուրումներին, վորպեսզի կարելի լինի ապահովել ռեալ աշխատավարձի աճումը, վոր ընդհանրապես շատ խիստ ազդեցություն ունի ամբողջ տնտեսական պլանը կատարելու վերաբերյալ։

## ՎՈՐՏԵՂ ԵՆ ԳՆԵՐԻ ԻՋԵՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Սակայն գուցե կոոպերացիան գների իջեցման աղբյուրներ չունի։ Գուցե կոոպերացիան արդեն օգտագործել է բոլոր հնարավորություններն ու կուսակցական և կառավարական բարձրագույն մարմինների կատեգորիկ պահանջը՝ դնելու իրեն անելանելի դրության մեջ։ Մի քանի օրինակ մեզ հակառակն են համոզում։ Սպառողական կոոպերացիան կարող է գներն իջեցնել։ Յեթե մենք վերցնենք տարեկանի (ржаной) հացի 1930 թ. դեկտեմբերի 1-ի գները, կստանանք հետևյալ պատկերը։ Մոսկվայում մեկ կիլոգրամ թխած հացն արժեր 7 1/2 կոպ, Սվերդլովսկում—8 կոպ., Լենինգրադում, Իվանովո-Վոզնեսենսկում և Յարոսլավլում—9 կոպ., մի շարք այլ քաղաքներում—10-ից մինչև 11 կոպ., իսկ



Ստալինոյում 1 կիլոգրամ թխած հացի գինը կազմում եր 12 կոպ.։ Այսպիսով միևնույն մթերքի գների տարբերությունը հասնում է մինչև 60% (Ստալինո և Մոսկվա)։

Իհարկե թխած հացի գինը մեծապես կախված է հացաթխման մեքենայացումից։ Այն քաղաքներում, վորտեղ մեքենայացումը թույլ է կատարված, գինը մի փոքր բարձր պետք է լինի։ Սակայն յեթե նկատի ունենանք և այդ մատակարարումը, միևնույն է, զգալի տատանումներ լինել չեն կարող։ Մոսկվան ու Լենինգրադը համարյա միևնույն հավասար պայմաններում են գտնվում, սակայն Լենինգրադը թխած հացը մեկ և կես կոպեկով ավելի յե վաճառում (կիլոգրամը), քան Մոսկվան։ Այսպիսով կոոպերացիան ունի գների իջեցման աղբյուրներ. յեթե Մոսկվան կարողացել է եժանացնել հիմնական սննդամթերքները, այդ բանը կարող է և պետք է անի նաև Լենինգրադը։

Ճիշտ միևնույն պատկերն են ներկայացնում նաև գյուղատնտեսական մթերքների մանրածախ գները։ Այստեղ տիրում է նույն խայտաբղետությունը։ Մոսկվայում 1929 թ. հոկտեմբերի 1-ին մանրածախ գները համեմատած 1928 թ. նոյեմբերի 1-ի գների հետ, կարողացել են իջեցնել համարյա 10%-ով, Լենինգրադում գները բարձրացել են 2%-ով, Խարկովում—11% և Լուգանսկում—15%-ով։ Վերոհիշյալ թվերից կարելի յե միմիայն մեկ յեզրակացություն հանել. կոոպերացիան գների իջեցման աղբյուրներ անպայման ունի, սակայն այդ աղբյուրը զանազան վայրերում զանազան կերպով են օգտագործվել։ Մի շարք տեղերում աշխատել են ուժերը ներածին չափ գների բարձրա-

ցում թույլ չտալ, այլ տեղերում ընդհակառակն այդ ուղղությամբ վոչինչ չեն արել, բնավ չմտածելով կատարելու կուսակցության կարևորագույն դիրեկտիվները:

Մեր կոոպերացիան շատ դեպքերում մեծ բարեխղճությամբ է վերաբերվում իր պահեստային տնտեսության թերություններին, ապրանքների անչափ «փչացվելուն», «թափվելուն» և այլ կորուստներին: Արժե հիշել թեկուզ անցած տարվա աշունը, յերբ կոոպերատիվ ճակատի ամենաուժեղ տեղերից մեկը—Մոսկվան—բավականաչափ պահեստներ չեր պատրաստել, վորպեսզի մայրաքաղաք թափվող կարտոֆիլն ընդուներ:

Զամոսկվորեչիեյի ճաշարանում (Մոսկվա) 1928 թ. հոկտեմբերից մինչև 1929 թ. հուլիսը պակասուրդները կազմում եյին 27 հազար ռուբլի, իսկ ավելցուկները 92 հազար ռուբլի: Միմիայն անցյալ տարվա օգոստոս ամսվա ընթացքում այդ ավելցուկները կազմում եյին 12 հազար ռուբլի, իսկ պակասուրդները—4 հազար ռուբլի: Այդ բոլոր գումարները ծանր բեռ են դառնում բանվոր սպառողի բյուջեյի համար, այն սպառողի, վորի գրպանին թանգ է նստում մեր կոոպերատիվների իրենց ապարատի բոլոր օղակներում աշխատանքը ճիշտ կերպով կազմակերպել չկարողանալու կամ չկամենալու հանգամանքը:

Վերևում մենք շեշտեցինք այն հանգամանքը, վոր կոոպերացիան շատ թույլ կերպով է իրագործում ռացիոնալացնող ձեռնարկումների անհրաժեշտ մինիմումը: Մինչդեռ հենց այստեղ է, վոր գոյություն ունի առևտրական աշխատանքը ճիշտ կազմակերպելու մեծամեծ հնարավորություններ: Ամենից առաջ անհրաժեշտ



է ամեն կերպ ընդարձակել սպառողական կոոպերացիայի մանրածախ առևտրի ցանցը և գոյություն ունեցող կոոպերատիվները յենթարկել անընդհատ առևտրական շաբաթի և բազմահերթափոխական աշխատանքի: Շնորհիվ վերջին ձեռնարկումների կոոպերատիվ խանութների վաճառունակությունը, ինչպես փորձը ցույց է տվել, բարձրանում է 15—20 %: Այդ հանգում է սպառողներին լավագույն կերպով սպասարկելուն, պոչերի և հերթերի վերացմանը: Կենտրոնկոոպների բոլոր խանութներում և բաշխային պահեստներում անհրաժեշտ է նախորոք կշռել մի շարք ապրանքներ՝ ինչպիսին են՝ շաքարը, ալյուրը, կրուպան, մակարոնը և այլն:

Նորմավորման յենթակա ապրանքների վաճառքը պետք է տեղի ունենա վոչ միայն խանութներում, այլև կրպակներում և վրաններում: Խիստ գնային մթերքները անհրաժեշտ է բաց թողնել խանութի մի քանի տեղերից. անհրաժեշտ է, վոր վաճառողները դադարեն ամեն տեսակ չեկեր գրելուց: Նորմավորված մթերքներ բաց թողնելու օրերին և գնորդների կուտակման դեպքում պետք է ավելացնել պատվող դրամարկղներ և այնպես անել, վոր վաճառողներն անմիջորեն իրենք ստանան փողը:

Գնորդների մեծ կուտակման օրերին պետք է վաճառողներին ուղարկել մեկ բաժանմունքից մյուսը: Միշտ լինում է այսպես. մրգեղենի խանութում հերթ է լինում, արդուզարդի բաժանմունքում լինում է յերկու-յերեք գնորդ: Իսկ արդուզարդի բաժանմունքի վաճառողն անգործ կանգնած է, մինչդեռ նրա ընկերներն այդ ժամանակ ծանրաբեռնված են, հնարավորություն չունենալով արագ կերպով ապրանքներ բաց թողնելու:

Յեվ վերջապես հարկավոր է լայն կերպով գործադրել ապրանքները տներն ուղարկելու գործը։ Վերը մենք մատնանշեցինք Սոկոլնիկյան սպառկոոպերացիայի (Մոսկվա) տխուր փորձը։ Իհարկե կան նաև լավ օրինակներ, վորոնք փայլուն կերպով ցույց են տալիս, թե ինչ օգուտ է տալիս ապրանքները կազմակերպված ձևով տուն հասցնելը։ Անցյալ տարի այդ ճանապարհի վրա կանգնեց ՄՊԲՎ-ի Մոսկվայի կոոպերատիվը, վորը կարողացավ գործով ապացուցել մանրածախս առևտրի ռացիոնալացման ամբողջ նշանակությունը։

Ահա նրա՛ աշխատանքի՛ արդյունքները։ Առաջին ամսում ստացվեց 328 նախնական պատվեր՝ 2.300 ռուբլու։ Այնուհետև այդ թիվը սկսեց արագ կերպով բարձրանալ, հասնել կարճ ժամանակվա ընթացքում 10.000 պատվերի՝ ամսական 25.000 ռուբլու։ Կոոպերատիվը սկսեց պատվերներ ստանալ հեռախոսով, այդպիսով վերջ տալով խանութներն այցելելու համար վատնվող ժամանակին, հերթի կանգնելուն և այլն։ Ապրանքը սպառողին տուն տանում են մոտոցիկլով, ստանալով դրա համար 30-ից մինչև 50 կոպ.։ Ինչպես փորձը ցույց է տվել, ապրանքը տուն հասցնելն իրեն միանգամայն արդարացրել է։ Ունեցած մոտոցիկլերն այլևս չեյին բավականացնում։ Ներկայումս այդպիսի մատակարարումը հասնում է օրական 1.000 ի։ Վարչությունն այդ աշխատանքի համար հատկացրել է յերկու ավտոմոբիլ։ ՊԲՎԲ-ի կոոպերատիվի փորձի մեջ վճռական դեր խաղաց պատվերները մաքուր կերպով կատարելու վերաբերյալ ընդունած ընթացքը և դեպի գնորդի փոքր պահանջներն ունեցած բարեխիղճ վերաբերմունքը։ Պատվիրված ապրանքը տրվում է ճիշտ և ժամանակին։ Ժամկետային պատվերները կատարվում են տասը րոպեյի ընթացքում, մյուսները — գնորդի հետ համաձայնության գալով, միջին հաշվով պատվերը կատարելու համար պահանջվում է յերկու ժամ։ Պետք է մատնանշել, վոր նախնական պատվերների բաժանմունքի մեկ տարվա աշխատանքի ընթացքում կոոպերատիվը անկանոնությունների վերաբերյալ միայն հազվադեպ է բողոքներ ստացել։ Սոկոլնիկյան սպառողական ընկերության և ՊԲՎԲ-ի ունեցած պրակտիկայի մեջ կա մեծ զանազանություն։ Առաջինում դեպի ռացիոնալացումը ունեցել են կազյոննի և անուշադիր վերաբերմունք, յերկրորդում — այնպիսի վերաբերմունք, ինչպիսին պետք է ունենա դեպի սպառողի շահերը կուլտուրական և խորհրդային կոոպերատորը։



## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿՐԱԿԻ ՏԱԿ

Մեր սպառողական կոոպերացիայի կատարած խոշոր թերություններում շատ բանով մեղավոր են իրենք փայատերերը։ Պետք է խոստովանել, վոր կոոպերատիվ հասարակայնությունը մեզ մոտ թույլ է զարգացած մինչև այժմ շատ-շատերը կոոպերացիայի վրա նայում են վոչ թե իբրև իրենց հարազատ գործի վրա, վորի զարգացման և բարելավման մեջ փայատերը կարծես բնավ շահագրգռված չէ։ Կոոպերատիվ ժողովներին վատ են հաճախում, փայատերը քիչ է հետաքրքրվում իր կոոպերատիվի աշխատանքով, գերադասելով ծայրահեղ դեպքում նրան հեռվից հայհոյել և խայտառակել, անմիջական մասնակցություն չունենալով բանվորական

կոոպերացիայի ամենօրյա կյանքին։ Մենք յուրաքանչյուր կոոպերատիվին կից ունենք խանութային հանձնաժողով։ Նրանց նպատակն է մշտական վերահսկողություն ունենալ գործին, օգնել վաճառողներին և սպառողների լայն մասսաներին համախմբել կոոպերացիայի շուրջը։ Պետք է իբրև կանոն խոստովանել, որ խանութային հանձնաժողովները վատ են աշխատում։ Ահա թե ինչ է ցույց տվել անցած տարվա դեկտեմբերին Մոսկվայում կատարված հետազոտությունը։

Խանութային հանձնաժողովները, որոնք կոչված են առաջին հերթին կռվելու կոոպերատիվ հիվանդությունների դեմ, համարյա թե անգործության են մատնըված։ Խամովնիկի շրջանի № 74 խանութին կից գոյություն ունեցող խանութային հանձնաժողովում կա 12 մարդ։ Նրանց ամբողջ աշխատանքը կայանում է նրանում, որ գրքում ստորագրում են, իսկ այնուհետև... ինչ ուզես։ Խանութում նույնիսկ չգիտեն խանութային հանձնաժողովի անդամների ազգանունները։ Սոկոլնիկի № 37 պարենավորման խանութում խանութային հանձնաժողով առհասարակ գոյություն չունի։ № 14 խանութում խանութային հանձնաժողովի անդամներից մեկը 17 օր անընդհատ հերթապահ է եղել։ Գործի այսպիսի դրվածքով դժվար է, իհարկե, խոսել վերահսկողության և հասարակական սովորույթների զարգացման մասին՝ ոչ միայն փայատերերի լայն մասսաներում, այլև իր՝ խանութային հանձնաժողովի մեջ։

Մոսկվայի շրջանի արտադրական հետազոտությունը ցույց է տվել, որ խանութային հանձնաժողովների աշխատանքը լավագույն դեպքում վերջանում



է միջնորդների վերացումով, բրակը ցուցակից հանելով։ Այնպիսի հարցերով, ինչպիսին է սպառողին սպասարկելու գործը լավացնելը, ոչ արտադրական ծախսերի կրճատումը և գների իջեցումը, խանութային հանձնաժողովները բոլորովին չեն զբաղվում։ Հուսակցական և արհեստակցական կազմակերպությունները խանութային հանձնաժողովներին վատ են ղեկավարում, թողնելով վերջիններիս իրենց բախտին, չհրավիրելով հրահանգչական ժողովներ և այլն։ Մինչդեռ միևնույն հետազոտությունը ցույց է տվել, որ խանութային հանձնաժողովներն իրենց բավարար յեռանդով յեվ աշխատանքի ճիշտ դրվածքով կարող են շատ բան անել։ Այսպես Մոսկվայում Խամովնիկի ռայոնի № 34 խանութի խանութային հանձնաժողովը բաց է արել խանութի վարիչի ու վաճառողի մի շարք չարաշահությունները և պնդել է աշխատանքից նրանց հեռացնել։ Բնորոշ է այն հանգամանքը, որ իրենք փայատերերը չափազանց քիչ հետաքրքրություն են հանդես բերում դեպի խանութային հանձնաժողովների աշխատանքը, իսկ հաճախ նույնիսկ մոռանում են նրանց գոյությունը։ Յեթե այդպես չլիներ, մեզ մոտ փոխանակ խանութային հանձնաժողովների իսկական աշխատունակ և ակտիվ անդամների, այդչափ մեծ քանակությամբ մեռած հոգիներ չէին լինի։

Պետք է ամենայն վճռականությամբ շեշտել, որ մենք չենք կարող մեր կոոպերացիայի աշխատանքը լավացնել, յեթե չկարողանանք այդ գործի մեջ քաշել փայատերերի լայն խավերը, չենք կարող նրանց մշտական արթուն հսկողության տակ դնել մեր խանութների, կրպակների, փոքրիկ խանութների և վրան-

ները ամենօրյա գործունեյությունը։ Մեր սպառողական կոոպերացիայի աշխատանքը պետք է դնել բանվորական ինքնագործունեության կրակի տակ։ Այդ և միմիայն այդ միջոցով մենք կհասնենք նրա աշխատանքի վորակի բարձրացմանը։

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԲՐԻԳԱԴՆԵՐՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՆ ԱՆՑԵԼ

Անցած տարվա դեկտեմբերին ՀԱՄԿԽ-ն Կենտրբանսեկցիայի հետ միասին առաջարկեցին կազմակերպել տեղերում բանվորական բրիգադներ վերանայման և ստուգման յենթարկելու աշխատավարձի ռեալ մակարդակի բարձրացման, բանվորական մատակարարման ու սպառողին սպասարկելու գործի վորակի լավացման բնագավառում՝ կոոպերացիայի և պետառևտրի աշխատանքի առանձին ողակների և ճյուղերի կատարած աշխատանքը։ Այդ բանվորական բրիգադների խնդրի մեջ եր մտնում կենտրբանկոոպների զանազան խանութների, պահեստների, սառցարանների, հասարակական սննդի ձեռնարկությունների և այլն աշխատանքի ստուգատեսի կազմակերպումը։

Բանվորական բրիգադները մանրամասն և բազմակողմանի կերպով հետազոտման եյին յենթարկում բազմաթիվ կոոպերատիվներ։ Նրանք ստուգում եյին և գները, և խանութի գործակատարի ունեցած վերաբերմունքը դեպի սպառողը. ինչպես են ապրանքներն առաջուց կշռում, վորտեղ պետք է վորոնել հայթայթման թերությունների պատճառները, ճիշտ են բաց թողնվում դեֆիցիտային ապրանքները. այդտեղ դասակարգային գծի խեղաթյուրումներ չկա՞ն, զրկվածները յերբ են բանվորների և ծառայողների համահավասար նորմավորված մթերքներ ստանում և այլն։



ՀԱՄԿԽ-ի և Կենտրբանսեկցիայի նախաձեռնությամբ կազմակերպված բրիգադներն ունեյին այդպիսի խնդիրներ։ Այդ բրիգադների աշխատանքն զգալի ոգուտ տվեց։ Բրիգադները բավականաչափ թերություններ հրապարակ բերեցին մեր կոոպերատիվների աշխատանքում և լայն հասարակության ուշադրությունը դարձրին դեպի այդ թերությունները։ Ահա որինակ՝ ինչ եր հրապարակ բերված Լուգանսկում։

Լուգանսկի կոոպերատիվը 1927 թ. «Պրավդայի» մրցմանը նվեր ստանալով, Խորհրդային Միության լավագույն կոոպերատիվների շարքը դասվեց։ Բանվորական բրիգադը ցույց տվեց, վոր 1929 թվին Լուգանսկի կոոպերացիան «լավագույն կոոպերացիայի» իր բարձր կոչումը չի արդարացրել, առաջին շարքերից նա խիստ յետ է մնացել։

Արժե առաջ բերել բրիգադի հետևյալ զեկուցագիրը՝ ցույց տալու համար, թե նա ինչ մեծ աշխատանք է կատարել։

«Մեր բրիգադը Լուգանսկի յերկու հարյուր բանվորների ոգնությամբ կատարեց Լուգանսկ քաղաքի պետական և կոոպերատիվ արտադրական կազմակերպությունների ստուգատես։ Բանվորական բրիգադները հայտաբերեցին մի շարք այլանդակություններ։ Կշեռքի մեջ խաբելը, գների բարձրացումը, անտնտեսությունը, դեֆիցիտային ապրանքների շռայլումը, վատնումները, խոշոր ավելցուկները (ապրանքայնացում), դեպի սպառողի հայտարարություններն ու առաջարկություններն ունեցած բյուրոկրատիկ վերաբերմունքը, բանվորներից կտրված լինելը, ապարատի աղտոտումը—ահա թե մոտավորապես վորոնք են բնո-

բասում առևտրական կազմակերպությունների, մասնավորապես Լուգանսկի բանվորական կոոպերատիվի վիճակը։ Կոոպերացիայի այդ թերությունները յերկար ժամանակ չեն նկատել վոչ արհեստակցական և վոչ էլ կոոպերատիվ կազմակերպությունները։

Փաստերը ցույց են տալիս, վոր մի շարք կազմակերպություններ լուգանչչինայի կոոպերատիվ ճակատում տեղի ունեցած մեծ թերակատարումների ամբողջ կարևորությունն ու լրջությունը չեն ըմբռնել։ Վոչ առևտրի շրջանային բաժանմունքը, վոչ էլ բանվորական կոոպերատիվի վարչությունը գների իջեցման համար վոչինչ չեն արել։ Փոխանակ անմիջապես անցնելու այդ կարևորագույն խնդրի լուծմանը, Լուգանսկում կենտրոնից ցուցումներ եյին սպասում։ Բանվորական կոոպերատիվը պլանի համաձայն 1930 թվի հունվարի 1-ին պետք ե ունենար 200 գլուխ կաթնատու անասուն, սակայն արդեն հունվարն էլ եր անցել, վարչությունը դեռ չեր սկսել նրանց գնել, իր գործ չկատարելը բացատրելով շենք չունենալով։ Կոոպերատիվը խոզերին կերակրելու շենք ե ունեցել, սակայն և այնպես, փոխանակ 250-ի, հունվարի 1-ին նրանց թիվը 200-ի էլ չեր հասնում։ Լուգանսկի կազմակերպությունները ամենախայտառակ վերաբերմունք են ունեցել հողային տարածության, նոր պահեստներ և այլն ունենալու վերաբերյալ՝ կոոպերացիայի արած պահանջներին։ Հողվարչությունը կոոպերատիվին անհրաժեշտ 150 հեկտարի փոխարեն բանջարանոցներին հատկացրել ե 30 հեկտար հող, իսկ կաթնատնտեսական ֆերմաներին վոչ մի կտոր հող չի հատկացրել՝ Արհեստակցական կազմակերպությունները նույնպես



վոչինչ չեն արել. մետաղագործների ռայոնական կոմիտեն բանվորական հայթայթման գործը լավացնելու համար մատը մատին չի խփել. մեքենական գործարանը ընդունել ե բանվորական կոոպերացիայի շեֆությունը։ Սակայն այդ շեֆությունը դուրս յեկավ միայն թղթի շեֆություն. մի քանի որվա ընթացքում ՀԱՄԿԽ-ի բրիգադը չկարողացավ մեքենական գործարանի գործարկոմին կատարել տալ ստուգատեսին մասնակցել ցանկացող կամավոր բանվորների հավաքագրում։

Կոոպերացիան խեղդվում ե պահեստի շենքերի և մանավանդ բանջարեղենի պահեստների պակասությունից։ Բանջարեղենի պահեստի հարմարեցման հարցը մի շարք դեպքերում դեմ ե առնում սպառողին անընդհատ կերպով այդպիսի կարևորագույն մթերքներ մատակարարելու դժվարությանը։ Սակայն Լուգանսկի քաղխորհուրդն ընդունում ե, վոր բիլիարդ խաղալը կարտոֆիլ պահելուց ավելի կարևոր ե։ Լուգանսկի բանվորական կոոպերատիվին առաջարկվել ե նկուղային շենքը կարտոֆիլից ազատել։ Քաղխորհուրդը մարտական կարգով միլիցիայի ոգնությամբ կարգադրել ե այդ նկուղից կարտոֆիլը դուրս թափել, իսկ դրա փոխարեն այդ շենքում դրվել են բիլիարդի սեղանները։ Կարտոֆիլը փոխադրել մի այլ տեղ, վորը միանգամայն անհարմար ե յեղել նրա պահպանության համար։

Բրիգադը միանգամայն իրավացի յե, յերբ վերջում նկատել ե, վոր առանց վերոհիշյալ թերությունները անմիջապես վերացնելու, աշխատավարձի ռեալ մակարդակի բարձրացման վերաբերյալ կուսակցության ԿԿ-ի պլե-

ճումբ ունեցած կարեվորագույն դիրեկտիվը Լուգանսկում կվիժի:

Դեպի կոոպերացիան ունեցած այդպիսի վերաբերմունքը հնարավոր է միմիայն բանվորական լայն մասսաներից ամբողջովին կտրված լինելու և նրանց պահանջներն ու խնդիրները հաշվի չառնելու պայմաններում: Լուգանսկի կոոպերատորները կատարել են մեծագույն սխալ. նրանք փայատերերին մոբիլիզացիայի չեն ենթարկել իրենց ճանապարհի վրա հանդիպած դժվարությունների շուրջը, այդ բոլոր հարցերը նրանք չեն դրել բանվորական լայն ժողովների, կուսակցական կազմակերպությունների և այլն քննության:

Դժբախտաբար պրոֆկազմակերպությունների կողմից դեպի կոոպերացիան ցույց արվող արհամարհական վերաբերմունքի փաստերը յեզակի չեն: Բանվորական բրիգադները տեղերում արհեստակցական միությունների կողմից դեպի կոոպերացիայի ստուգատեսը յերևան են բերել կայլոննի վերաբերմունքի բազմաթիվ դեպքեր: Օրինակ՝ Դոնի Ռոստովում հենց աշխատանքի սկզբում նկատվել է, վոր արհմիությունները բավական սառը վերաբերմունք են ունեցել դեպի ռեալ աշխատավարձի բարձրացումը: Սկզբներում այնքան էլ ուշադիր վերաբերմունք չունեյին դեպի ՀԱՄԿԽ-ի բրիգադը նաև յերկրային բանվորական սեկցիայի նախագահության անդամները:

Ուրալում կոոպերացիայի ստուգատեսի բանվորական բրիգադները հանդիպեցին արհմիությունների խիստ զուսպ վերաբերմունքին: Քիմիկոսների, կառուցողների, կաշեգործների և հանքագործների միությունները կատարելապես հրաժարվեցին նրանց ոգնելուց: Արհմիությունների Ուրալի խորհուրդը մտածում եր ռեալ աշխատավարձի համար մղվող կռիվը ինչ-ինչ պատճառներով սկսել փետրվարին: ՀԱՄԿԽ-ի բրիգադն ու վերջինիս կազմած բանվորական բրիգադները բավականին աշխատանք թափեցին, վորպեսզի կարողանան ծակել բյուրոկրատացած պրոֆչինովնիկների բութ և լճացած լինելու այդ պատը:



Մարիուպոլում կոոպերացիայի աշխատանքի ստուգատեսը տապալվեց, վորովհետև միությունները չկարողացան հասարակական ուշադրությունը քաշել դեպի այդ հարցը: Վոչ մի անգամ ստուգատեսի կիրառման հանձնաժողովի նիստին միությունների ներկայացուցիչները չներկայացան: Արհմիությունների Մարիուպոլի խորհուրդը կենտրոնական բանվորական կոոպերատիվի բաց թողած 200 հազար ռուբլին բաժանեց բանվորական վարկավորմանը: Բանվորական վարկավորումը յերեք ամիս մնաց թղթի վրա, վորովհետև արհմիություններն այդ վարկը ձեռնարկությունների վրա չեյին բաժանել:

Ահա թե ինչ է հայտաբերվել Վյազմայում, վորտեղ նույնպես աշխատել են թե ՀԱՄԿԽ-ի և թե բանվորական բրիգադները:

Ֆաբգործարկոմների վրա կատարած բրիգադի արշավանքը ցույց տվեց, վոր արհմիությունները ռեալ աշխատավարձի բարձրացման հարցերը միանգամայն աչքաթող են արել: Արհմիությունների և կոոպերացիայի ուշադրությունից թռել է նաև 1930 թ. հունվարի 1-ին ավելի քան 19 %-ով վորոշ ապրանքների (բյուջետային ինդեքս) հավաքածուի արժեքի բար-

ձրացումը։ Ձեռնարկությունների և հիմնարկություն-
ների պատի լրագրերն ամենևին չեն մասնակցում ան-
ալ աշխատավարձը բարձրացնելու պայքարին։ Այս-
պես, կենտրոնական բանվորական կոոպերատիվի կո-
լեկտիվը իր պատի լրագրի վերջին համարը բաց թո-
ղեց Հոկտեմբերյան տարեդարձից առաջ և դրանով էլ
բավականացավ։ Վյազմայի շուկայի հիմնական դժվա-
րությունները նկատվում են գլխավորապես այնտեղ
վորտեղ դեռևս մասնավորը պինդ ե նստած։ Մասնա-
վորի ձեռքին ե գտնվում յուղի և ձվի ամբողջ առև-
տուրը և կաթի առևտրի 80 %-ը։ Մասնավորի դեմ
տեղի ունեցող կռիվը թույլ կերպով ե տեղի ունենում։
Կաթի կոնտրակտացման պլանը կատարվել ե միմիայն
40 %-ով։

Նույնը նաև մսի մթերումների վերաբերյալ։ Այս-
տեղ Վյազմայի կենտրոնական բանվորական կոոպերա-
տիվը հրապարակ ե բերում անթույլատրելի դանդա-
ղություն։ Պլանի համաձայն կենտրոնական բանվորա-
կան կոոպերատիվը պետք ե գերացներ 300 խոզ, սա-
կայն գերացրել ե միմիայն 37։ Այս բացատրվում ե
նրանով, վոր կենտրոնական բանկոոպը այդ խոզերի
գերացումը համարում ե «վնասաբեր գործ»։

Կենտրոնական բանկոոպի խանութների ստուգումը
բաց ե անում շատ թերություններ։ Շաքարով և ա-
լյուրով լցված մեշոկներն ուղղակի ընկած են խոնավ և
կեղտոտ գետնի վրա։ Գործակատարները անուշադիր
են դեպի սպառողները։ Բանվորական ծայրամասերում
գտնվող խանութներն ավելի վատ են մատակարար-
վում, քան քաղաքի կենտրոնի խանութները։ Դեֆի-
ցիտային ապրանքները տրվում են միմիայն անդամ-



վորոշ որերին, վորի պատճառով ստեղծվում են մեծա-
մեծ հերթեր։

Բանվորական բրիգադների կիրառած կամպանի-
աների հիմնական արժեքն այն ե, վոր 1927 թվից հե-
տո առաջին անգամն եր, վոր կուսակցության դիրեկ-
տիվի հիման վրա գների իջեցման համար լայն կամ-
պանիա յեր տեղի ունենում, բանվորական հասարակու-
թյան ուշադրությունը մոբիլիզացիայի յեր յենթարկ-
վում մեր կոոպերացիայի ունեցած թերությունների և
ցավերի շուրջը։ Բանվորական բրիգադները սկիզբ դը-
րեցին մեր սպառողական կոոպերացիայի մասսայա-
կան լայն ստուգմանը։ Նրանց աշխատանքի փորձը
պետք ե ընդարձակել և խորացնել։ Մեծագույն սխալը
կլիներ կարծել, վոր այս կամ այն բանվորական բրի-
գադի գործունեյության վերջանալը ստինքյան նը-
շանակում ե մշտական վերահսկողության, մեր կոոպե-
րատիվների մշտականս ստուգման վերջ։ Սպառողական
կոոպերացիայի գործունեյությունը լավացնելու մեջ
պետք ե քաշել փայատերերի նորանոր շերտեր։ Կոոպե-
րացիայի, արհեստակցական կազմակերպությունների,
պատի և տպագիր լրագրերի բանթղթակիցների մեջ
պետք ե մտնի ստուգումների նոր ձևեր գտնելը և նը-
րանց կենսագործումը։ Վորքան բազմազան լինեն այդ
ձևերը, վորքան ավելի շատ փայատերերը ներս քաշեն
նրանք սպառողական կոոպերացիայի վերաբերյալ տեղի
ունեցող վերահսկողության մեջ, այնքան ավելի լավ։

Դասակարգային ճիշտ գծի սահմանում յեվ կիրա-
ռում, ռացիոնալիզատորական ձեռնարկումների լայն կի-
րառում, լավագույն սպասարկում սպառողին, պահես-
տային տնտեսության գործի որինակելի կազմակերպում,

բանջարաբուծության յեվ կենդանաբուծության զարգացում—ահա թե ինչ է անհրաժեշտ աշխատավարձի ռեալ մակարդակի բարձրացման յեվ բանվորի բյուջեի լիակատար ընդգրկման համար: Իսկ այդ ամենը միմիայն կոոպերատիվ ապարատի ուժերով կատարել՝ առանց փայատերերի մասնակցության չի կարելի: Փայատերը սիրով կարձագանքի ամեն մի սկսած գործի, յեթե միայն կարողանան նրան ինչպես պետքն է կազմակերպել:

Հետագայում մենք քննության կառնենք հասարակական սննդման զանազան ձևերը՝ կոոպերատիվների սննդատես, մրցում լավագույն խանութների համար, ցուցադրական դասեր, արշավներ և այլն:

## ՄՐՑՈՒՄ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԽԱՆՈՒԹԻ ՀԱՄԱՐ

Կոոպերատիվ խանութի աշխատանքը շատ բանով կախված է նրա վաճառողների, գանձապահների և մյուսների աշխատանքից: Յեթե այդ աշխատողները պարտականություններին վերաբերվում են ձևական, կազյոննի յեղանակով, ինչպես առածն է ասում—«գանգը տվեր, պրծավ գնաց»,—դժվար է սպասել, թե կարելի յե սպառողին լավ սպասարկել: Ընդհակառակն, մտածված, դեպի գործն ունեցած խորհրդային վերաբերմունքը անհրաժեշտ պայմաններ են սպառողին լավագույն կերպով սպասարկելու համար:

Այդ տեսակետից մեծ նշանակություն ունի Տվերի փորձը, վորտեղ դեռևս մի քանի տարի առաջ սպառողական կոոպերացիան «Тверская правда» խմբագրության հետ միասին խանութի, լավագույն վաճառողների, գրասենեկային ծառայողների և գանձապահների վերաբերյալ կազմակերպել են մի քանի լավագույն մրցում:



Առաջին մրցումն իր առաջ դրել է հետևյալ խնդիրները. կոլեկտիվ գնահատականների, փայատերերի առանձին նամակների, ընդհանուր ժողովների, կուսակցության բջիջների, ֆաբգործկոմների և ուրիշների վորոշումների միջոցով Տվերի կոոպերատիվ ցանցի և առանձին կոոպերատիվ աշխատողների աշխատանքի մասին լրիվ նյութ հավաքել: Մրցման տեխնիկան բարդություն չէր ներկայացնում. նյութն ստացվելիս ամբողջովին տպվում էր «Тверская правда»-յում, իսկ այնուհետև հանձնվում էր հատուկ հանձնաժողովի քննության ու հաստատմանը, վորի կազմի մեջ մտնում եյին կոոպերացիայի, կուսակցության նահանգային կոմիտեյի, նահանգային արհմիութենական խորհրդի, խմբագրության և բանթղթակիցների ներկայացուցիչները:

Մրցումն ինչպիսի պահանջներ ուներ գործակատարների նկատմամբ: Նրանք բոլորը բաժանվել են մի քանի խմբերի. վարիչներ, վաճառողներ, գանձապահներ, գրասենեկայիններ: Մրցությունից նվեր ստանալու համար (իսկ դրանք տասն եյին և բաղկացած եյին զանազան տնտեսական առարկաներից և պատվավոր վկայականներից) պետք էր բավարարել հետևյալ պայմաններին. վարիչը դեպի գործը պետք է ունենար ազնիվ ու բարեխիղճ վերաբերմունք, լավ հասկացողություն ունենար մանրածախ առևտրի մասին, այս կամ այն ռայոնների պահանջների համեմատ կարողանար ապրանքների տեսակները վորոշել: Կարևոր կետ էր համարվում դեպի սպառողը քաղաքավարի և

խելացի վերաբերմունք ունենալը, խանութի մեծ վաճառունակությունը, սանիտարական տեսակետից խանութի օրինակելի կազմակերպումը, սխալ հաշիվներ չկատարելը։ Նվեր ստանալու համար պակաս նշանակություն չի ունեցել աշխատավորների նոր խավեր կոոպերացիայի մեջ քաշելու հոգսը, խանութները պլակատներով, լոզունգներով, պատկերներով և այլ բաներով զարդարելը։ Գանձապահների համար պետք էր ստեղծել աշխատելու արագություն, փողերը ստանալու և հանձնելու ժամանակ հաշվի անսխալականություն, դեպի գնորդը քաղաքավարի և ուշադիր վերաբերմունք, ավտոմատ գանձարկղի կազմության հետ ծանոթություն և գանձարկղի փչանալու դեպքում նրան իսկույն գործի գցելու ընդունակություն։ Գրասենեկայինների աշխատանքը վորոշվում էր բաց թողնվող մթերքների գրանցման արագությամբ, գնորդների հետ ունեցած քաղաքավարի վերաբերմունքով, ստանձնած աշխատանքի ճիշտ կատարումով։ Հասկանալի յե, վոր այդ յերեք խմբերի համար էլ մեծ դեր է խաղացել աշխատանքային կարգապահությունը։

Կոոպերացիայի բոլոր անդամներին և հասարակական զանազան կազմակերպություններին՝ խմբագրության և կենտրոնական բանվորական կոոպերացիայի կողմից արված այն կոչին, թե պետք է խիստ լայն մասնակցություն ունենալ կատարվող մրցությանը, մերկացնել կոոպերատիվ ապարատի բոլոր դրական և բացասական կողմերը—սպառողները պատասխանել են մի անսովոր արագությամբ։ Մրցության մասին լրագրում հայտարարելուց մի օր հետո սկսել են ստացվել առաջին արձագանքները։ Փայատերերը չեյին ճնշվում



իրենց գրելու ձևից։ Նրանք հաճախ գրում էյին թղթի կտորների վրա, մատնանշելով վորևէ խանութում լավ աշխատանքը, մյուսում՝ վաճառորդների անուշադիր վերաբերմունքը և այլն։ Խմբագրությունն որեցոր կանոնավոր կերպով լրագրում զետեղում էր բանվոր սպառողների նամակները, մանրամասնորեն նշանակելով իր մոտ ամեն մի դիտողություն, տեսակավորելով նրանց զանազան խանութների համար և այլն։ Այդ կարևոր էր, վորպեսզի հնարավոր լիներ ունենալ ակտիվության ճիշտ պատկերը, գիտենալու համար, թե վոր խանութի վերաբերյալ շատ նյութ է ստացվում, վորտեղ են սպառողները լռում, վոր շրջանում պետք է կատարել բանթղթակիցների հրահանգչական ժողով, խոսել կուսակցական կազմակերպությունների հետ և այլն։ Յերկու շաբաթից հետո մրցման հանձնաժողովն արդեն լիակատար իրավունք ուներ լրագրի էջերում գրել հետևյալը.

«Բանվորների, բանվորուհիների և ծառայողների՝ դեպի մրցումն ունեցած հետաքրքրությունը որեցոր աճում է։ Ամեն օր մենք ստանում ենք բազմաթիվ նամակներ, վորոնք ցույց են տալիս վոմանց լավ և բարեխիղճ, իսկ մյուսների վատ աշխատանքը։ Կոոպերատիվ ճակատն աշխուժանում է։ Բորբոքվում է խանութների լավագույն ծառայողների պարգևատրման շուրջ պայքարը։ Ուղարկված նյութի հիման վրա հանձնաժողովը հետագայում յելնելու յե պարգևատրման արժանի գործակատարներին նվերներ տալուց...»

Նամակների հոսանքը շարունակ մեծանում էր, ըստ վորում վորոշ խանութների շուրջ լրագրի էջերում բորբոքվում էյին կատաղի վեճեր։

Մրցումն ընթանում էր մեծ հաջողությամբ։ Հենց նրա բորբոքման ժամին մրցման հանձնաժողովը խմբագրության հետ միասին վորոշեց լավագույն խանութի ար-տանէրթային կոոպերատիվային մրցում կազմակերպել։ Այսպիսով լավագույն աշխատանքի մեջ մրցում էյին վոչ միայն կոոպերատիվի առանձին աշխատողները, այլ և բոլոր խանութները։ Մրցումն սկսվեց կոոպերացիայի միջազգային որը—հուլիսի 5-ին, նրա վերջավորությունը համարվեց Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձին։

Յերբ սկսեցին մի հայտարարի բերել առաջին մրցման արդյունքները, պարզվեց, վոր առանձին գործակատարների աշխատանքի վերաբերյալ ստացվել է ընդամենը 150 դիտողություն։ Առաջին շարքերը միանգամից առաջ քաշվեցին մի քանի խանութներ, վորոնք հանդիսանում էյին նվիրատվության առաջին թեկնածուներ։ Ուղարկված 150 դիտողությունը խոսում էյին առանձին կոոպերատիվ աշխատողների դրական և բացասական կողմերի մասին։ Այն դիտողությունները, վորոնք մերկացնում էյին առանձին թերությունները, կենտրոնական բանկոոպի վարչությունը իսկույն ևեթ քննության էր յենթարկում և դրանց վերաբերյալ տեղում ձեռք էր առնում համապատասխան միջոցներ։

Մրցումը կոոպերատիվ հասարակությանը ցնցեց։

Կոոպերացիայի աշխատողները հետևում էյին մրցմանը, ուշադրությամբ կարդալով լրագրի էջերում հրապարակ յեկած նյութերը։ Շատ խանութների աշխատողների հուզ ավեցին, նրանք լավացրին ապրանքների տեսակները, սկսեցին ավելի քաղաքավարի վերաբերմունք ունենալ դեպի գնորդները և այլն։ Դրա հետևանքով տասը լավագույն կոոպերատիվ աշ-



խատող ստացան նվերներ։ Նրանց ազգանունները հրապարակվեցին «Тверская правд»-յում, վորպեսզի ամբողջ կոոպերատիվ հասարակայնությունը, ամբողջ սպառողները ճանաչեն իրենց առաջնակարգ կոոպերատորներին։ Կենտրոնական բանկոոպն իր կայացրած հատուկ վորոշման մեջ խոստովանեց, վոր մրցումը հասել է իր նպատակին, նպաստելով կոոպերացիայի ամրացմանն ու աճմանը, և իբրև առաջին փորձ, պետք է համարել դրական։ Ինքը կենտրոնական բանկոոպը ցանկություն հայտնեց, վոր այդպիսի մրցում կազմակերպվի նաև հաջորդ տարին։

Տվերի նախաձեռնությանը հետևեց Վլադիվոստոկը։ վորի կենտրոնական բանվորական կոոպերատիվը Տվերի կենտրոնական բանվորական կոոպերատիվի վարչությանը խնդրեց իրեն ուղարկել այն բոլոր նյութերը, վորոնք վերաբերում են կոոպերատիվ մրցում կազմակերպելուն։

Մեկ տարուց հետո «Тверская правда»-յի խմբագրությունը կրկնեց յերկրորդ մրցումը, վորի նպատակն ու խնդիրները նույնն էյին, ինչ վոր առաջին մրցման։ Փոխվել էյին միմիայն նվերները, սակայն փայատերերին կոոպերատիվի աշխատանքի ստուգման մեջ լայն կերպով քաշելու հիմնական նպատակը մնաց նույնը։ Մրցումը տևեց մի քանի ամիս։ Նա իր հետ բերեց արդեն վոչ թե 150 նամակ, ինչպես այդտեղի ունեցավ առաջին անգամ, այլ մի քանի հարյուր առաջարկ, դիտողություն և հոդված։ Ճիշտ այնպես, ինչպես առաջին մրցման ժամանակ, առանձին գործակատարների շուրջը բորբոքվեցին վեճեր։

Պարգևատրված ընկերների մեջ յեղան այնպիսի-

ները, որոնք նվերներ էին ստացել նաև առաջին մրցման ժամանակ: Այդ ամենալավ ապացույցն է այն բանի, թե որքան կարևոր է կոոպերացիայում լավագույն վաճառորդի մրցում կազմակերպելը, որքան կարևոր է մեր ամբողջ կոոպերատիվ ցանցի գործունեությունը դնել հասարակայնության հսկողության տակ:

## ՀԵՏԵՎԵԼ ՏՎԵՐՑԻՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ

Այսպես մենք տեսանք, որ կոոպերատիվ մրցումներն զգալի օգուտ տվին Տվերի կոոպերացիային: Կարելի յե ամեն կերպ հասարակական ստուգման այդ ձևը հանձնարարել նաև ներկայումս: Նախ քննենք մի հարց. կարելի՞ յե արդյոք կոոպերատիվ մրցում կազմակերպել առանց ամենորյա թերթի մասնակցության: Մենք կարծում ենք, որ այո: Իհարկե այդ դեպքում մրցության չափը մի քիչ կփոքրանա և նա կարող է միմիայն ծավալվել առանձին խանութի սահմաններում: Սակայն քանի որ ներկայումս մեր խանութներում կա վաճառորդների և սպասարկող անձնակազմի բավական զգալի շտատ, այդպիսի մրցումն անշուշտ կունենա որոշ հաջողություն. այդպիսի մրցումը ազդեցություն չի ունենա վաճառորդների, խանութի վարիչի վրա և այլն:

Այդպիսի մրցման առաջամարտիկը կարող է լինել խանութային հանձնաժողովը, որի պարտականության մեջ ամենից առաջ մտնելու յե մրցման բյուլետենի հրատարակումը: Այդ բյուլետենն անհրաժեշտ է կախել ուղղակի խանութի մեջ, որպեսզի գնորդը կարողանա մրցման մեջ անմիջական մասնակցություն



ունենալ: Խանութի մեջ պետք է կախել նաև մի քանի արկղներ, ուր սպառողը կարող է գցել իր դիտողությունները: Խանութային հանձնաժողովը պետք է սիստեմի յենթարկի ստացված նյութը և զետեղի բյուլետենի էջերում: Անհրաժեշտ է խանութը զարդարել համապատասխան պլակատներով և լոզունգներով, որոնցով կարելի լինի կոչ անել գնորդին առանձին աշխատողների որակի մասին նյութ տալ: Այդպիսի մրցման ժամկետը կարող է լինել փոքր,—յերկու-յերեք շաբաթ, ամենաշատը մեկ ամիս:

Խանութային հանձնաժողովը պետք է նախապես պայմանավորվի կոոպերատիվի վարչության հետ՝ նվիրատվության համար մի փոքր գումար հատկացնելու համար: Չպետք է վախենալ նվիրատվության և մրցման բյուլետենի համար ավելորդ ծախսեր անելուց,— այդ ծախսերն ամբողջովին կարդարանան կոոպերատիվ աշխատանքի որակի բարձրացումով, սպառողին լավագույն կերպով սպասարկելով:

Բայց, իհարկե, ամենից լավ է մրցումը կատարել ամբողջ կենտրոնական բանվորական կոոպերատիվի մասշտաբով՝ այդ գործի մեջ քաշելով տեղական լրագիրը: «Тверская правда»-ի փորձը, որը մենք մանրամասնորեն նկարագրեցինք, ցույց է տալիս, որ այդպիսի մրցումը, բացի օգուտից, վնաս չունի:

Մենք անհրաժեշտ ենք համարում կանգ առնել Տվերի առանձին թերությունների վրա, որպեսզի տեղերում այդպիսի մրցումներ կազմակերպելիս կարելի լինի նրանցից խուսափել: Տվերում մրցումները չափազանց ձգձգվում էին: Այդ նախ և առաջ առաջանում էր նրանից, որ նախապես բավականաչափ բացա-

տրական և կազմակերպչական աշխատանք չէր կատարվում։ Մրցումն սկսվելուց առաջ քիչ բացատրական հոդվածներ էին զետեղվում, իսկ տեղի ունեցող մրցման ժամանակ՝ այն հետամնաց ռայոններում, վորտեղից քիչ նյութեր էին ստացվում, մանրամասն հրահանգներ էին տրվում վոչ միշտ ժամանակակից տեմպերով մրցման ժամկետը պետք է սահմանափակել ամենաշատը մեկ ու կես ամսով։ Այսպես Տվերում մրցման ժամանակ վոչինչ չէր հաղորդվում այն միջոցների մասին, վորոնք կենտրոնական բանկոոպի վարչությունը գործադրում էր հայտաբերված թերությունների նկատմամբ։ Մինչդեռ այդ միանգամայն անհրաժեշտ է, քանի վոր նման նյութը միմիայն կմեծացնի դեպի մրցումն ունեցած հետաքրքրությունը. փաստերը գործով կհամոզվի իր դիտողությունների իրական լինելու մեջ, կոոպերացիայի աշխատանքի նկատմամբ ունեցած հասարակական վերահսկողության ամբողջ ոգուտի մեջ։

Մրցման հանձնաժողովը պետք է կանոնավոր կերպով ժողովներ ունենա, վորպեսզի քննության առնի արդեն ստացված նյութը, միանգամից առանձնացնի այն թույլ մասերը վորոնց պետք է հարվածել։ Լրագրերն պետք է նյութ մատակարարել սիստեմատիկ յեղանակով, հավաքել վորոշ խանութի աշխատանքի վերաբերյալ յեղած դիտողությունները, հենց այդտեղ էլ համեմատության մեջ դնելով նրա աշխատանքը ուրիշ խանութների աշխատանքի հետ և այլն։

Անհրաժեշտ է լավագույն խանութի, կոոպերատիվի լավագույն աշխատողի մրցման մեջ մտցնել նաև լավագույն խանութային հանձնաժողովի մրցումը։ Նրանց



գործունեությունն էլ ճիշտ այնպես պետք է հասարակական վերահսկողության տակ առնել, մասնանշելով աշխատունակ և անգործունակ խանութային հանձնաժողովները։

Այժմ մենք հատուկ ուշադրություն ենք դարձնում բանվոր սպառողին բանջարեղեններ մատակարարելու գործի վրա, հետևապես նվեր ստանալու անհրաժեշտ պայմաններից մեկը պետք է լինի հատկապես այդ բնագավառում կոոպերատիվ խանութի լավ կարգավորված աշխատանքը։

Կոոպերատիվ մրցումը միմիայն այն դեպքում խոշոր հաջողություն կունենա, յեթե նրա մեջ ակտիվ մասնակցություն ունենա ամբողջ կոոպերատիվ մասսան։ Առանց դրան մրցումը կվերածվի կազյոննի և վոչինչ չտվող հետազոտման։ Այդ յերբեք չպետք է մոռանան այն ընկերները, վորոնք կազմակերպում են սպառողական կոոպերացիայի հասարակական ստուգում։

## ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՑԱՆՑԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Լավագույն խանութի վերաբերյալ տեղի ունեցող մրցումը կարող է հանդիսանալ իբրև բանվորական կոոպերացիայի ստուգատեսի բաղկացուցիչ մի մասը։ Վերևում մենք խոսեցինք այն ստուգատեսի մասին, վորը կազմակերպել է ՀԱՄԿԽ-ն բանվորական բրիգադների ոգնությամբ։ Կարելի յե գտնել նաև ստուգատեսի այլ ձևեր, ինչպես որինակ պատի և տպագրվող լրագրի միջոցով։

Ներկայումս մեր մամուլն արդեն ունի մասսայական աշխատանքի զգալի փորձ։ Մեր լրագրերն անց են

կացրել շատ ստուգատեսներ՝ թե նահանգական և թե միութենական ընդհանուր մասշտաբով։ Արժե հիշել 1928—29 թվին միմիայն կենտրոնական «Պրավդայի» կազմակերպած արտադրական խորհրդակցությունների ստուգատեսը։ Այդ ստուգատեսը, ինչպես հայտնի յե, շատ մեծ արդյունքներ է տվել և նրա փորձն ամբողջովին կարելի յե տեղափոխել սպառողական կոոպերացիան։

Ինչպես պետք է ստուգատես կազմակերպել։ Ամենից առաջ անհրաժեշտ է ստեղծել կենտրոնական ստուգատեսի հանձնաժողով, վորը ամբողջ ստուգատեսի համար հանդիսանար իբրև ղեկավար։ Այդ ստուգատեսի հանձնաժողովի մեջ պետք է մտցնել կոոպերատիվի վարչության, խմբագրության, արհմիությունների խորհրդի, բանթղթակիցների, խանութային գործակատարների և արտադրության բանվորների ներկայացուցիչներին։ Վերջիններս պետք է ընտրել վորևէ խոշոր ձեռնարկության ընդհանուր ժողովում։ Ստուգատեսի հանձնաժողովն ընտրում է մի քանի բանվորական բրիգադներ, վորոնց պարտականությունների մեջ պետք է մտնի առանձին խանութներում և ձեռնարկություններում անմիջորեն ստուգատես կատարելը։

Վերն արդեն մենք խոսեցինք, թե ինչ կերպ պետք է ստեղծվեն այդպիսի բանվորական բրիգադները։ Բանվորական բրիգադն անպայման պետք է լինի ճկուն, ընդունակ՝ այս կամ այն հետազոտական աշխատանքը հարվածային կարգով կատարելու մեջ։ Այդ բրիգադի կազմը 7—8 մարդուց ավելի չպիտի լինի։ Բանվորական բրիգադների քանակը պետք է սերտորեն



կապված լինի խանութների, ճաշարանների, պահեստների և այլն քանակի հետ։ Կոոպերացիայի ստուգման և ստուգատեսի բանվորական բրիգադները յերբեք չի կարելի ստեղծել զանազան հիմնարկությունների ներկայացուցչության հիման վրա. պետք է ամբողջովին պահպանել կամավորությունը։ Յուրաքանչյուր բանվորական բրիգադի համար ոգնության պետք է կանչել խանութային ակտիվ գործակատարներին, հաշվետարներին, ճաշարանային աշխատողներին, սանիտարական բժշկին և այլն։

Ստուգատեսն սկսելուց առաջ բրիգադները պետք է մանրամասնորեն ծանոթանան աշխատանքի ծրագրին և նրա կատարման յեղանակներին։ Յուրաքանչյուր բրիգադիր պետք է ունենա արձանագրության դըրքույկ և մատիտ։ Սրանք մանր-մունր բաներ են, սակայն դրանք չափազանց եյական են, վորոնց մասին չպետք է մոռանալ։ Բանվորական բրիգադների խընդիրների մեջ պետք է մտնի վերստուգիչ գնումների կիրառումը և նրանց հիման վրա ապրանքների գների ստուգումը, համեմատած սահմանված գների հետ, վորակի ստուգումը, կշռի ճիշտ լինելը, վերաբերմունքը գնորդների հետ և այլն։

Վերստուգիչ գնումներ կատարելուց հետո բանվորական բրիգադը պետք է անցնի խանութի, կրպակի, հացի գործարանի և այլն սիստեմատիկ և բազմակողմանի ստուգման։ Դրա համար բրիգադը պետք է մշտական հսկողություն կազմակերպի խանութային գործակատարի՝ դեպի գնորդն ունեցած վերաբերմունքի, ժամանակին և ճիշտ կերպով ապրանքներ բացթողնելու և մթերքների չափ ու կշռի վերաբերյալ։ Բան-

վորական բրիգադը պետք է ուսումնասիրի խանութի
հերթերի պատճառները։

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն նվիրել
ռացիոնալիզատորական ձեռնարկումների կիրառմանը.
կատարվում է արդյոք ապրանքների նախապես կըշ-
ռում, տեղի ունենում է արդյոք խանութի մեկ բա-
ժանմունքից մյուսը վաճառողների տեղափոխում։

Մեծ աշխատանք պետք է կատարել բանվորնե-
րին՝ և նրանց ընտանիքներին դեֆիցիտային ապրանք-
ների բաշխումն ստուգելիս։ Կատարվում է արդյոք այդ
բաշխումը դասակարգային նշանի հիման վրա, թե
դեֆիցիտային ապրանքներն ընկնում են մասնավոր-
ների, ձայնազուրկների, նեպմանների և ուրիշների
ձեռքը։

Միաժամանակ բանվորական բրիգադը պետք է
ստուգի շտատի, տրանսպորտի և այլ բաների վրա խա-
նութի կատարած ծախսերը։ Մենք արդեն նշեցինք,
վոր կոոպերատիվ տնտեսության այդ ճյուղերի ճիշտ
դրվածքից զգալի չափով կախված է լինելու գների
իջեցումն ու աշխատավարձի ռեալ մակարդակի բարձ-
րացումը։

Բանվորական բրիգադները պետք է հատուկ լուրջ
ուշադրություն դարձնեն գողությունները վերացնելու
վրա և ստուգեն ապրանքների ցամաքելու, փչվելու,
բնական կերպով պակասելու և փչանալու չափը և գործ-
նական միջոցներ նախատեսեն այդ բոլոր թերություն-
ները վերացնելու կամ կրճատելու համար։

Բանվորական բրիգադների զեկույցները (ռա-
պորտները) հենց՝ հանդիսանալու յեն ստուգատեսի
առաջին նյութը։ Անհրաժեշտ է այդ նյութը հանձնել



փայատերերի լայն մասսաների քննությանը՝ լրագրի,
հատուկ ժողովների և պատի թերթերի միջոցով։ Այդ
կլինի ստուգատեսի սկիզբը, նրա առաջին էտապը։

Վոչ մի կասկած չի կարող լինել, ինարկե, այն
մասին, վոր արդեն բանվորական բրիգադների հավա-
քած և հրապարակված նյութը, լրագրության մեջ տե-
ղի ունեցած ագիտացիան փայատերերի կողմից առաջ
կբերեն ստուգատեսի թղթակցությունների հոսանք։
Ստուգատեսի հանձնաժողովի անիլքի մեջ պետք է
անպայման մտնի հասարակական կարծիքի կազմակեր-
պումը։

Ստուգատեսի հանձնաժողովը պետք է նախատե-
սի իր գործողությունների ճիշտ պլանը, սահմանի ու-
բացուցային ժամկետները և այդպիսի ծրագրի հիման
վրա աշխատանք ծավալի։

Մեծ դեր պետք է խաղան զանազան տեսակի ժո-
ղովները։ Ստուգատեսի հանձնաժողովը պետք է կատա-
րի խանութային հանձնաժողովների, բանթղթակիցների,
կոոպերատիվների տնտեսական հանձնաժողովների և
այլ տեսակի խորհրդակցություն։ Այդ ժողովներից ա-
մեն մեկում պետք է դնել միմիայն յերկու հարց. ռեալ
աշխատավարձի բարձրացումը վոչ պակաս քան 12%-ով
յով մեր ամբողջ հասարակայնության մասնակցությունը
կոոպերացիայի ստուգման մեջ։ Զեկույցը պետք է կրի
խիստ գործնական բնույթ։ Շատ քիչ պետք է հրապար-
վել «ընդհանրապես կոոպերացիայի նշանակության»,
նրա հետագա զարգացման և նման այլ տեսակի խըն-
դիրների վերաբերյալ գեղեցիկ ֆրազներով։

Խանութային հանձնաժողովների ժողովներում
պետք է քննության առնել հետևյալ հարցերը՝ ինչու

յեն խանութային հանձնաժողովները մինչև այժմ վատ աշխատել, ինչ նշանակություն ունեն նրանք գների իջեցման համար մղվող պայքարում, որտեղ են նրանց ուժեղացման ճանապարհները։ Այդպիսի ժողովի հաշվետվությունը պետք է հրապարակել լրագրում, զետեղելով միաժամանակ նաև խանութային հանձնաժողովների գործունեությունն ամրացնելու գործնական ցուցումներ։

Նույնը նաև բանվորական թղթակիցների և տնտեսական հանձնաժողովների վերաբերյալ։

Ամբողջ ստուգատեսի աշխատանքում պետք է զարկ տալ գործնական կոնկրետ առաջարկներին։ Արդյունաբերության ձեռնարկություններում կիրառվող ստուգատեսներն արժեքավոր եյին նրանով, որ նրանք տալիս եյին ահագին քանակությամբ գործնական առաջարկներ, որոնք ուղղված եյին դեպի աշխատանքի արտադրողականության բարձրացումը, ապրանքամշակման մեծացումը, ինքնարժեքի իջեցումը, որակի բարձրացումը։ Ձեռնարկությունների ստուգատեսները հաջողություն եյին ունենում նաև այն պատճառով, որ նրանցում մասնակցում եր մասսան, որ բանվորների և ծառայողների լայն խավերը գնդակոծման եյին յենթարկում արտադրական բոլոր թերությունները։

Յուրաքանչյուր խանութում անհրաժեշտ է կախել փայատերերի առաջարկների հավաքման արկղներ։ Այդ արկղները պետք է շարունակ մաքրվեն, իսկ նրանց միջոցով ստացված նյութը պետք է հրապարակվի լրագրում, ուղարկվի քննության կամ թե հանձնվի պատի թերթին։ Պատի մամուլի դերը ստուգատեսում չափազանց մեծ է։ Փորձը ցույց է տվել, որ պարբե-



րական մամուլն ի վիճակի չե իր մեջ զետեղելու ստուգատեսի ամբողջ նյութը։ Այստեղ հրաշալի միջոց են հանդիսանում պատի լրագրերը, ուր հարկավոր է ուղարկել պակաս կարևոր դիտողությունները։ Տպագրական և պատի լրագրի այդպիսի կապը պակաս ոգտավետ չի գործի համար—նա ոչ միայն առաջ կբերի թղթակիցների մի նոր հոսանք, այլ և կամրացնի մեր պատի լրագրերը։

Շատ լավ կլինի հատուկ տպագրական ստուգատեսի լրագիր հրատարակել։ Եվ այստեղ կա արդեն ավելի մեծ փորձ, որը դրական արդյունքներ է տվել։ Ստուգատեսի հատուկ լրագրերը կազմակերպող հզոր միջոց են հանդիսացել ստուգատեսի կիրառման ժամանակ։ Շատ տեղերում նրանք սիրո և ուշադրության են արժանացել։ Մարտական բովանդակությամբ տպագրական լրագրերը կարդացվում եյին մինչև վերջին բառը։ Յուրաքանչյուր հերթական համարի լույս տեսնելուց հետո զգալի կերպով ավելանում եր ստուգատեսի թղթակիցների հոսանքը, ավելի և ավելի յեր բարձրանում իսկական պրոլետարական ինքնաքննադատության ալիքը։ Յուրաքանչյուր ստուգատես հաջող կանցնի միայն այն ժամանակ, յերբ հասարակական ամբողջ ստուգումը տեղի կունենա ծավալուն ինքնաքննադատության նշանի տակ։ Թերությունները կոծկելու բոլոր փորձերին պետք է տրվի վճռական և ջախջախիչ հարված։ Ոչ մի ժամանակ, ոչ մի առաջարկ չպետք է մնա առանց հրապարակման կամ քննության։ Միմիայն այդ դեպքում ստուգատեսը կարդարացնի իրեն։

Ստուգատեսի հանձնաժողովը պետք է մտահոգ-

ված լինի ստուգատեսի ճշտված հուշաթերթ հրապարա-
կելով։ Ստուգատեսի հուշաթերթում պետք է թվել այն
հարցերը, վորոնց պետք է սպառողը պատասխանի։ Այդ
հարցերը պետք է շոշափեն կոոպերատիվների գործու-
նեության հիմնական մոմենտները։ Այդ հարցերի շար-
քը մոտավորապես հետևյալն է.

1. Չե՞ն յեղել արդյոք գների կամայականորեն
բարձրացման դեպքեր պրեյսկուրանտի նկատմամբ։

2. Չե՞ն նկատվել արդյոք վաճառողների կողմից
անուշադիր և կոպիտ վերաբերմունքի դեպքեր դեպի
գնորդները։

3. Վո՞րքան ժամանակ է կորչում հերթեր կանգ-
նելու վրա։ Վորո՞նք են այդ հերթերի պատճառները.
ապրանքն ի՞նչ ձևով պետք է բաց թողնել, վորպեսզի
հերթեր և պոչեր չլինեն։

4. Կազմակերպվա՞ծ է արդյոք մթերքները տուն
տանելը, ի՞նչպես է կարգավորված այդ փորձը, չկա՞ն
ընդհատումներ կամ վատորակ ապրանքներ չե՞ն ու-
ղարկվում։

5. Կիրառվու՞մ են արդյոք կիսաֆաբրիկատները և
ապրանքները պատրաստի ձևով։

6. Խանութի բաժանմունքներից վո՞րն է ամենից
լավ աշխատում։ Վաճառողներից վո՞րն է ամենից լավ
աշխատում և ամբողջ կոլեկտիվի համար օրինակ հան-
դիսանում։

7. Ի՞նչպես է դրված բանջարեղենի պահպանումն
ու վաճառքը։

Հուշաթերթի սկզբում պետք է շեշտել աշխատա-
վարձի ռեալ մակարդակի բարձրացման ստուգատե-
սի նշանակությունը և այդ ստուգատեսին բոլոր փա-



յատերերի անմիջական մասնակցության անհրաժեշ-
տությունը։

Պետք է հուշաթերթում նախազգուշացնել գնորդ-
ներին, վոր բոլորովին պարտադիր չէ դրված հարցե-
րին պատասխանել այնպես, ինչպես անկետայում։ Փա-
յատերը կարող է կանգ առնել իրեն ամենից շատ հե-
տաքրքրող մի վորևէ հարցի վրա։ Կարող է ընդհան-
րապես պատմել կոոպերատիվի աշխատանքի մասին,
մտցնել վորևէ գործնական առաջարկ, ուղղված գործի
ամբողջ դրվածքը լավացնելու խնդրին։

Ստուգատեսի հուշաթերթը, ինչպես ցույց է տվել
փորձը, դյուրություն է տալիս բանվորին և ծառա-
յողին ստուգատեսին մասնակցելու։ Շնորհիվ այդ հու-
շաթերթերի զգալի կերպով աճում է նրանց ակտիվու-
թյունը։ Ստուգատեսի հանձնաժողովը պետք է ուշա-
դրությամբ հետևի, թե վոր խանութից կամ կրպակից
ամենից շատ լրացրած հուշաթերթեր են վերադարձել։
Թույլ տեղերը պետք է ուղարկել բանվորական բրի-
գադներ, հրավիրել խանութային հանձնաժողովների,
վաճառողների ժողովներ։ Այդ թույլ մասերին պետք է
մեծ տեղ հատկացնել հրատարակվող բյուլետեններում,
պարբերական մամուլի էջերում, պատի լրագրերում և
այլն։

Հասկանալի յե, վոր չի կարելի սպառողին հա-
կադրել խանութի գործակատարին։ Ստուգատեսի հենց
սկզբին պետք է հրավիրել խանութային գործակա-
տարների միջանի ընդհանուր ժողով, նրանց ակտիվ
մասնակցության քաշելով ստուգատեսին։

Ստուգատեսի ամբողջ ստացված նյութը պետք
է ամենայն մանրամասնությամբ քննության առնել և

սիստեմի յենթարկել։ Ստուգատեսի վերջը՝ ստացված նյութի հիման վրա պետք է կոոպերացիայի ամբողջ աշխատանքի վերաբերյալ անել ընդհանուր յեզրակացություններ և պետք է մշակել սպառողին սպասարկելու գործը լավացնելու, կոոպերատիվ դիրքերն ամրացնելու գործնական առաջարկներ։ Այդպիսի յեզրակացություններն ու առաջարկները պետք է քննության առնել խանութային գործակատարների, վարչության, տնտեսական հանձնաժողովի նիստերում և հրապարակել լրագրում։ Մի վորոշ ժամանակ, մոտավորապես յերկու-յերեք ամիս անցնելուց հետո, պետք է կատարել կրկին ստուգում,—կատարված են արդյոք տրված առաջարկները, թե նրանք թղթի վրա յեն մնացել։ Միանգամայն անողոք պետք է լինել նրանց վերաբերյալ, ովքեր կփորձեն այդ առաջարկները կյանքում չկիրառել։ Ստուգատեսը վիժած կլինի, յեթե ստացված հարուստ նյութը չօգտագործվի, յեթե հանգիստ կերպով պառկի կոոպերատիվների տնտեսական հանձնաժողովների կամ վարչությունների թղթապանակներում։ Ստուգատեսի ստացված առաջարկները պետք է հիմք ծառայեն կոոպերացիայի բոլոր օղակների ամրացման համար։

## ԱՐՇԱՎ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ ՎՐԱ ՅԵՎ ՆՐԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ստուգատեսի աշխատանքի ձևերից մեկը կարող է լինել հանկարծակի հարձակումը մեր խանութների վրա։ Այդպիսի արշավների նախաձեռնողն էր անցյալ տարի «Պրավդան», վորը դեպի այդ աշխատանքն էր



Ներկայումս արշավների սիստեմի գործադրությունը ավելի և ավելի լայն կերպարանք է ստանում․ այդ արշավների տված օգուտը ակներև է։ Արշավի կազմակերպման ժամանակ պետք է հիշել հետևյալը. արշավը միմիայն այն դեպքում արդյունավետ կլինի, յերբ նրա մասին վոչվոք չգիտենա, բացի իրենց արշավողներից յեվ կազմակերպիչներից։

Արշավի ուղարկվող բրիգադները պետք է խիստ մանրամասն հրահանգված լինեն։ Ամեն մեկը պետք է գիտենա, թե ինքն ինչ պետք է անի, ինչ աշխատանք է իրեն վիճակված։ Հետևապես պարտականությունների ճիշտ բաշխումը պակաս դեր չի խաղում արշավների կազմակերպման տեխնիկայում։ Մեծ նշանակություն ունի նաև շտաբի կամ ստուգատեսի հանձնաժողովի կողմից ցույց տրվող ղեկավարությունը։

Մեկ տեղում իր աշխատանքը վերջացրած հանձնաժողովը կարող է փոխվել մեկ ուրիշ տեղ։ Շտաբը նույնպես պետք է հոգ տանի, վորպեսզի բոլոր բրիգադների աշխատանքը վերջանալուց հետո նրանք միասին ընդհանուր խորհրդակցություն ունենան, վորտեղ պետք է քննության առնել առաջին արդյունքները, նախատեսել նյութի վերջնական հանձնման օրը և այլն։ Շտաբի հանած յեզրակացությունները պետք է լայն քննության առարկա դարձնել թե լրագրի և թե հատուկ ժողովների միջոցով։

ԿՎՀ ԲԳՏ արշավ կազմակերպելով մեր խորհրդային հիմնարկությունների վրա՝ գործը հասցրեց իր վախճանին։ Արշավի նյութերը քննության առնվեցին բանվորական ժողովներում, ըստ վորում բյուրոկրատիզմի մեջ մեղադրվողների, դեպի հաճախորդներն անուշադիր

վերաբերմունք ունեցողների նկատմամբ հենց այդտեղ էլ վորոշումներ կայացրին։ ԲԳՏ-ի ժողկոմատի բողոքների միացյալ բյուրոն աշխատում եր անմիջապես արտադրության մեջ, ըստ վորում իրենք՝ բանվորները քննում եյին արշավի յեզրակացությունները և նյութերը։

Այդպիսի աշխատանք կարող է կատարել նաև կենտրոնական բանվորական կոոպերատիվի վարչությունը։ Նա վարչության ճիշտ այդպիսի բաց նիստ կարող է գումարել ձեռնարկության վորևե տեղում և վիճաբանությունների ու արշավի բրիգադներից ստացված տեղեկությունների հիման վրա վճիռ կայացնել այն մարդկանց վերաբերյալ, ովքեր իրենց կոչման բարձրության վրա կանգնած չեն յեղել, ովքեր չեն կարողացել իրենց ստանձնած գործից գլուխ հանել, ովքեր կոպիտ վերաբերմունք են ունեցել դեպի հաճախորդները, հաշվի և կշռի մեջ խաբել են և այլն։

Իբրև հաջող կատարված արշավ կարելի յե բերել Մոսկվայի կոմյերիտականների փորձը, վորոնք անցյալ տարվա աշնանը այդ գործի համար մոբիլիզացիայի եյին յենթարկել յերկու և կես հազար «թեթև կավալերիստներ»։

—Նախքան արշավի դուրս գալը,—պատմում եյին «Մուրճ ու մանգաղ» գործարանի կավալերիստները,—մենք մանրամասնորեն քննում եյինք, թե ով, ինչ և ինչպես պետք է ստուգման յենթարկի, ճիշտ կերպով վորոշելով մեր մեջ աշխատանքի առանձին բնագավառների սահմանները։ Մեկը ստուգում եր «պոչերի ստեղծման պատճառները», մյուսը—խանութային հանձնաժողովների աշխատանքը։ Ստուգումից հետո «կա-



քաշել բանվորների և բանվորուհիների զգալի կադրերը։ վալերիստները» հավաքվում եյին միասին և քննում եյին այն հարցը, թե ինչ պետք է անել հետագայում։ Վոմանք գնում եյին Դուբրովի ավանի բանվորական զորանոցները և այնտեղ առաջարկներ եյին հավաքում, մյուսները բանվորներից առաջարկներ հավաքելուց զատ, զրուցում եյին նույնպես Շելեպիխա գյուղի գյուղացիների հետ, վորի բնակչությունը հաճախ է մուտք գործում «Կոմունար» կոոպերատիվը։

Արշավի վերջում Մոսկվայի կոմյերիտականները «Մոսկվայի առևտրա-կոոպերատիվ ցանցի աշխատանքի գործի վերաբերյալ» հանել եյին մի ամբողջ մեղադրական յեզրակացություն։ Այդ մեղադրականը բաղկացած եր հինգ կետից։ Դրանցից ամեն մեկը մի ծանր հանդիմանություն եր թե կոոպերացիային և թե ամբողջ կոոպերատիվ հասարակայնությանը՝ աշխատել չկարողանալու համար։ Այստեղ գոյություն ունի թե ռացիոնալացման սաբոտաժ, թե պոչերի դեմ չկռվելու ցանկություն, թե կոպիտ վերաբերմունք դեպի սպառողները, թե գների խաղ, մթերքների սխալ բաշխում, թե խանութային հանձնաժողովների թույլ գործունեյություն, և այլն և այլն։ Այդ բոլոր մեղադրանքները հաստատված են փաստերով, վորոնց դեմ հակաճառել չի կարելի։ Միակ բանը, վոր պետք է անել, այդ այն է, վոր պետք է ձեռքերը քշտել և անմիջապես անցնել այն թերությունների վերացմանը, վորոնք արտաբերել են կոմյերիտականները։ Ընդհանուր յեզրակացություն։

«Առևտրական ցանցի վրա կատարած արշավը

ցույց տվեց, վոր կոոպերացիայի վերաբերյալ բանվորական գլխավոր վերահսկողությունը—խանութային հանձնաժողովները—գոյություն են ունեցել միմիայն թղթի վրա։ Ահա թե ինչու ապրանքի առանձին տեսակները ժանգոտում են, դեֆիցիտային ապրանքները խանութներից չքանում են և ինչու խանութները հիվանդ են հերթերով։ Հարկավոր է ամենուրեք գործնական վերահսկողություն սահմանել ապրանքների հայթայթման, բաշխման և շարժման հաշվառումի վերաբերյալ։ Սթափեցնենք, նորացնենք և ամուր վոտքերի վրա կանգնեցնենք խանութային հանձնաժողովները, մտցնելով նրանց աշխատանքը ռացիոնալիստական մրցման հունի մեջ։ Մենք առաջարկում ենք նույնպես 500 հոգուց բաղկացած առաջքաշման կադրեր կազմակերպել կոմյերիտականներից և անկուսակցական բանվոր յերիտասարդներից՝ կոոպերացիայում աշխատելու համար, մտցնելով այդ 500 առաջքաշվածներին կոոպերատիվ ցանցի մեջ»։

Մոտավորապես այդպիսի արշավներ պետք է կազմակերպեն նաև ստուգատեսի հանձնաժողովները, վորոնք կատարում են խանութների, կրպակների և այլ տեսակի աշխատանքի հասարակական ստուգում։ Սակայն յերբեք չպետք է մոռանալ, վոր արշավը միայն այն ժամանակ դրական հետևանքներ կունենա, յեթե ստացված նյութերը վոչ միայն հրապարակվեն և հայտարարվեն, այլև հիմք ծառայեն ամբողջ ապարատը թարմացնելու և նկատված թերությունները վերացնելու համար։



## ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԵՑԻՆ ԿԵՐՉԻ ԿԵՆՏՐՈՆԿՈՈՊԻՆ

Ստուգատեսի հանձնաժողովը կարող է ձեռնարկել նաև մի շատ հետաքրքիր գործ. այդ կոոպերատիվ վարչության, առանձին խանութի աշխատողների և ուրիշների վերաբերյալ ցուցադրական դատ կազմակերպելն է։ Մեզ մոտ չգիտենք ինչ—վերջին ժամանակներս մոռացության են տվել այդ վոչ պակաս կարևորություն ունեցող ագիտացիոն-դաստիարակչական միջոցը։ Մի ժամանակ այդպիսի դատերը կիրառվում եյին շատ լայն կերպով, և նրանց փորձը պետք է վերակենդանացնել ներկայումս, յերբ կոոպերացիայի ամբողջ աշխատանքը դրվում է հասարակական հսկողության տակ։

Դատ կազմակերպելիս ի՞նչ բանի ամենից խիստ պետք է պատրաստվել։ Պետք է ճիշտ կերպով բաշխել դերերը՝ նշանակել դատարանի կազմը, մեղադրողին, պաշտպանին։ Իհարկե վոչ մի դատ չի կարող կայանալ, յեթե բանվորական կոոպերատիվի վարչությունը կամ խանութի աշխատողները չհասկանան կամ չցանկանան հասկանալ գործի եյությունը և փորձեն աշխատանքից խուսափել։

Դատարանի կազմն ընտրվելուց հետո (նրա մեջ պետք է մտցնել բանվորների, բանթղթակիցների, խանութային հանձնաժողովների և այլ ներկայացուցիչները) դատախազը պետք է մանրամասն կերպով կազմի մեղադրական յեզրակացություն այն նյութերի հիման վրա, վորոնք ստացվել են ստուգատեսի ժամանակ։ Դատի որվա մասին պետք է խիստ ընդարձակ հայտարարություն անել թե լրագրերի, թե առանձին

հայտարարությունների և թե թռուցիկների ու այլ միջոցով։ Դատի հաջողությունն ապահովված կլինի, յեթե մեկ կողմից նրա համար պատրաստվեն, իսկ մյուս կողմից յեթե նա տեղի ունենա մասսայի աչքերի առաջ։ Անհրաժեշտ է նույնպես նշել վկաներին՝ թե մեղադրողների և թե պաշտպանների կողմից։ Այդ իհարկե հնարավորությունից չի զրկում, որ հավաքվածների միջից վկաներ դուրս գան։ Ընդհակառակն, որքան շատ լինեն այդպիսի ելույթները, այնքան լավ։ Ագիտացիոն-ցուցադրական դատն այդպիսի դեպքում ինքնաքննադատության կրակի տակ կդնի մեր կոոպերացիայի աշխատանքը։

Արտաքուստ դատը պետք է այնպես կազմակերպել, որպեսզի ներկա յեղողներն այն տպավորությունն ստանան, թե տեղի ունեցող ժողովը մեծ կարևորություն և նշանակություն ունի։ Կարելի յե տըվյալ դատից տեղափոխել որևե սովորույթ՝ ուժեղացնելու համար այդպիսի տպավորությունը։

Ահա թե ինչպես այդպիսի ագիտացիոն ցուցադրական դատ են կազմակերպել Կերչում։

«Կրասնայա Կերչ» լրագիրը նախապես կենտրբանկոոպի դատի վերաբերյալ լայն պատրաստություն տեսավ։ Մի քանի օր շարունակ նրա եջերից չեր հեռանում հայտարարությունը՝ կենտրբանկոոպի դատի մասին։

Այդ հայտարարությանն ավելանում եր յերբեմն դիտողություն, յերբեմն հոդված, որոնցով բացատրվում եր, թե ինչի համար և ինչ պատճառով ե դատվելու Կերչի կենտրբանկոոպը։

Վերջապես մետաղագործների ակումբի ծայրից



ծայր լեքը լցված շենքում, գործարանին կից բանվորական ավանում կայացավ դատը։ Մեղադրյալների նստարանի վրա յեր կենտրբանկոոպի ամբողջ վարչությունը։

Հասարակական մեղադրողը—«Կոոպերատիվնայա ժիզն»-ի ներկայացուցիչը—դատարանի առաջ թվում ե այն մեղադրանքները, որ Կերչի բանվորական հասարակության անունից ներկայացնում են լրագրերը կենտրբանկոոպին։

— Կոոպերատիվի ուժերով,—ասում ե հասարակական հայցվորը,—ստուգում կատարվեց, թե Կերչի կենտրբանկոոպը ինչպես ե կատարել բանվոր սպառողների սպասարկումը բարելավելու վերաբերյալ՝ Կենտրմիության և նրա սեկցիաների առաջարկները։

Հետազոտվել ե կենտրբանկոոպի ցանցի 50%-ը։ Պարզվել ե, որ Կերչի կենտրբանկոոպը չի կատարել մի շարք կարևորագույն ձեռնարկումներ, որոնք պետք ե զգալի կերպով բարելավեյին բանվոր սպառողի սպասարկումը։

— Կենտրբանկոոպը,—շարունակում ե «Կոոպերատիվնայա ժիզն»-ի ներկայացուցիչը,—ունեցել ե մի շարք ռացիոնալիզատորական ձեռնարկումներ։ Սակայն դրանք կատարված են ձևականորեն։ Ստանալով Կենտրմիության նամակը ռացմինիմումի մասին, կենտրբանկոոպը յուրաքանչյուր խանութի վերաբերյալ առանձին ցուցումներ չի մշակել, այլ բոլոր խանութներին տվել ե ընդհանուր ցուցումներ։ Այդպիսի մեթոդն, իհարկե, չեր կարող դրական հետևանքներ ունենալ։ Նա նույնպես ամեն տեսակի հնարավորությունից զրկել ե բանվորական լայն հասարակայնությանը քաշելու՝ ռացմինիմումը կյանքում կիրառելու գործի մեջ։

Կենտրբանկոոպի վարչության ներկայացուցիչ ընկ. Դոբրովը դատարանին բացատրություններ է տալիս, վոր ընդհանրապես մեղադրանքները ճիշտ են, սակայն առանձին մանրամասնությունները ճիշտ չեն։

Դատարանն անցնում է մեղադրյալների հարցաքննությանը։

Բանվորական լսարանը, վորի անունից բանվորական հասարակական դատարանը դատում է կենտրբանկոոպին, միմիայն սոսկ ականատեսի դերում չէ։ Բանվորները կենտրբանկոոպի վարչությանը հարցեր են տալիս՝ ոգնելով դատարանին պարզելու բանվոր սպառողին սպասարկելու վիճակը։

— Ինչու գալանտերեյայի կրպակների փոխարեն դուք Կոլոնկայում (այստեղ այսպես են կոչում ավանը) ծխախոտի կրպակներ եք կառուցում։

— Ինչու վերջին որերս նորից հացի մեծ հերթեր եյին առաջացել։

— Ինչու դուք չեք վաճառում այնպիսի ապրանքներ, ինչպիսին են՝ վաքս, կոճակներ, մեխեր և բանվոր սպառողին հարկավոր այլ տեսակի մանր ապրանքներ։

— Դուք գիտեք, վոր քաղաքային խանութները մեզանից շատ հեռու չեն (Կոլոնկայից մինչև քաղաքը 7 կիլոմետր է)։ Ինչու դուք չեք շատացնում այստեղի խանութների ապրանքների տեսակները։

Ղրիմի միության էքսպերտն ու հրահանգիչը հիմնականում համաձայն են նկարագրած դրությանը։

Դատաքննությունը տևում է մեկ ժամից ավելի։

Դատարանն անցնում է կողմերի վիճաբանությանը։

«Կոոպերատիվնայա ժիզն»-ի ներկայացուցիչը



խոսում է կոոպերացիայի առաջ դրված խնդիրների և ռացմինիմումի նշանակության մասին։ Նա մի շարք կոնկրետ որինակներով ապացուցում է, վոր առանց բանվորական հասարակայնության ակտիվ ոգնության չի կարելի բարելավել կոոպերացիայի աշխատանքը։ Մասնավորապես նա մատնանշում է ընկ. Վոյկովի անվան գործարանի վորոշ բանվորների որինակը, վորոնք հասկանալով իրենց ունեցած պարտականությունը հանդեպ կոոպերացիայի և կոոպերացիայի ապրած դժվարությունները իրենց համար՝ փայավճար վորոշեցին մեկ ամսվա աշխատավարձի չափով։

— Մենք պետք է այսոր դատենք կենտրբանկոոպին այն բանի համար, վոր նա չի կիրառել մի շարք ձեռնարկումներ բանվոր սպառողների սպասարկումը բարելավելու համար, սակայն և մենք պետք է խոստովանենք, վոր իրենք՝ հերչի բանվորները դեռևս չեն արել այն ամենը, ինչ վոր թույլ կտար կենտրբանկոոպին բարելավելու իր աշխատանքը։

Այնուհետև սկսում են հրապարակ գալ բանվորները։

— Դուք հասարակայնության ուշադրությունը չեք հրավիրել ռացիոնալացման հարցերի վրա,— ասում է բանվոր ընկ. Ֆլուսը, դիմելով կենտրբանկոոպին,— Ցեվ ինչ է ստացվել։ Խոշոր մասնավոր առևտրականներին մենք ասպարեզից վտարել ենք, իսկ մանրերը դեռևս գոյություն ունեն։

— Միմիայն կոոպերատիվը չէ, վոր մեղավոր է այն բանում, թե ինքը վատ է աշխատում։ Մեղավոր են նաև արհմիությունները, վորոնք կոոպերացիային հարկ եղած ուշադրությունը չեն հատկացրել։

— Մեղավոր է նաև մամուլը։ Կոոպերացիայի գծով կատարվող կուլտուրական աշխատանքը թույլ է, այդ պատճառով էլ բանվորական հասարակայնության օգնությունը նույնպես թույլ է.— [redacted]

— Դուք կամենում եք, որ բանվոր կոոպերատիվիստները ձեզ օգնեն,— ասում է ընկեր Տիտցովան, դիմելով կենտրբանկոոպին։— Իսկ չէ՞ որ մենք մեր պարտականությունները ինչպես հարկն է չգիտենք։ Դուք նեղություն չեք քաշել կոոպանկյան համար բաժանորդագրվել «Կոոպերատիվնայա ժիզն»-ին, որը կօգներ ձեզ լուսավորական աշխատանք կատարել կոոպերատիվի ներսում։

Ընկ. Կորեևը մտցնում է յերկու առաջարկ.

— Ժամանակն է խոսքից գործի անցնել,— ասում է նա։— Պետք է մեր կոոպերատիվին օգնենք իսկական ձևով։ Առաջարկում եմ, որ ընկ. Վոլկովի անվան գործարանի բանվորները վերցնեն Կոլոնիայի կենտրբանկոոպի շեֆությունը։ Թող կենտրբանկոոպի կազմբաժինն ու գործարանի կոոպբյուրոն մշակեն այդ շեֆության ձևերը։ Առաջարկում եմ, որ մեր գործարանի բանվորները կենտրբանկոոպի աշխատողներին մրցության կանչեն։ Գործարանի գործարկոմն ու կենտրբանկոոպի տեղկոմը պետք է պայմանագրի համար պայմաններ մշակեն։

Հանվում է դատավճիռ, որը մի շարք ցուցումներ է տալիս կենտրբանկոոպին և յուրաքանչյուր ձեռնարկում կիրառելու համար սահմանում է ճիշտ ժամկետներ։

Դատարանը չեշտում է, որ ռացմինիմումը կի-



րառվել է առանց բանվորական հասարակայնության ուշադրությունը բավարար չափով դեպի այդ ռացմինիմումը քաշելու, վորի պատճառով էլ նա հարկավոր արդյունքը չի տվել։ Դատարանը վորոշում է հետաքննության նյութերն ու իր վորոշումը հայտնել Կենտրբանսեկցիային ի գիտություն։ Դատարանը խնդրում է Ներքին քաղխորհրդի առևտրա-կոոպերատիվ սեկցիային ստուգելու իր վորոշման կատարումը։

## Ի՞ՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԳՐՔԵՐԸ

Կարիք չկա յերկար ու բարակ խոսելու այն մասին, թե ինչ նշանակություն ունեն բողոքների գրքերը կոոպերացիայի ամենօրյա գործունեության վերաբերյալ գնորդների ունեցած մշտական վերահսկողության համար։ Սակայն բողոքների գրքերն օգտակար են միմիայն այն դեպքում, յեթե նրանց մեջ գրված բոլոր բաները արագ և մանրամասն քննության են առնըվում, յեթե գանգատավորը շուտ պատասխան է ստանում իր բողոքին։ Մենք դժբախտաբար մինչև այժմ չենք կարող պարծենալ դեպի բողոքների գրքերն ունեցած հատուկ ուշադրությամբ։ Ամենուրեք այդ բողոք-արկղները գոյություն ունեն միմիայն ձևի համար։ Ահա թե ինչու բողոքների գրքերի վիճակն ստուգելը և՛ օգտակար է, և՛ անհրաժեշտ։

Ստուգատեսի հանձնաժողովը կարող է ընտրել միքանի բրիգադներ բողոքների գրքերն ստուգելու համար։ Այդ բրիգադների անելիքների մեջ պետք է մտնի նախ՝ բոլոր բողոքները նայելը, և յերկրորդ՝ պարզել, թե խանութային գործակատարները (առաջին հերթին խանութների վարիչները) ինչ վերաբերմունք ունեն

դեպի բողոքների գրքերը: Պետք է ամենաանողոք կերպով պատժի ենթարկել նրանց, ովքեր բյուրոկրատ վերաբերմունք ունեն դեպի բողոքների գրքերը՝ դժկամությամբ են այդ գրքերը գնորդներին տալիս, վոմանք էլ կարիք չեն համարում բողոքներին պատասխանել և այլն: Բողոքների գրքերն ըստ էության քննադատության և ինքնաքննադատության միջոցներից մեկն են, առանց վորոնց մեր կոոպերատիվները չեն կարող ապրել և նորմալ կերպով զարգանալ:

Մոսկվայի կոմյերիտականները արշավ հայտարարելով, վորի մասին մենք վերևում ասացինք, քննության առան նաև բողոքների գրքերը: Իրենց զեկուցման մեջ նրանք այդ առթիվ ասում են.

«Բողոքների գրքերը հրաշալի միջոց են՝ հայտաբերելու կոոպերացիայի աշխատանքի թերությունները: Այս ու այնտեղ գտնվել են մարդիկ, վորոնք մտածել են դրանց ապականել: Առանձին կոոպերատորներ առևտրական ցանցի աշխատանքի քննադատության արգելք են հանդիսանում: Ահա փաստեր: МСПО-ի № 153 բուլկու խանութի գանձապահուհի Ոգորցովան փոխանակ առանց այլևայլության գիրքը «կավալերիստներին» տալու, սկսել է հարց ու փորձ անել, թե ինչի համար է, ինչ պատճառով, ինչ նպատակով և այլ: Բոլշոյ Պոլույարովկի փողոցի 6|2 տան խանութի կառավարչի ոգնական Բուբնովը հաճախորդներին գրքեր տալիս է մեծ դժվարություններով: 1929 թ. ընթացքում գրքում գրված է 140 բողոք: Մի շարք բողոքներ մնացել են առանց պատասխանի: № 52 խանութում (Բաումանի ռայոն) բողոքների գրքի հայտարարություն չի կախված: Յերբ հարցրել են վաճառողնե-



րին, թե ուր է գիրքը, նրանք պատասխանել են, վոր՝ գիրքը տրվում է միմիայն վարչի թույլտվությամբ: «Կրասնայա Պրեսնյա» № 68 խանութում Կուդրյավցևի հունիսի 9-ի բողոքին մինչև նոյեմբեր ամիսը չեն պատասխանել: «Կրասնայա Պրեսնյա» № 27 խանութի գրքում սպառողների արած բողոքներին չեն պատասխանում»:

Բողոքների գրքերի քննության վերաբերյալ հավաքված նյութերը պետք է սիստեմի վերածել և հրապարակել մամուլում կամ այդ մասին զեկուցել վաճառողների ընդհանուր ժողովում: Իսկ կոոպերացիայի ինքնաքննադատությունը խանգարողներին պետք է ամենախիստ պատասխանատվության կանչել: Մենք տեսանք, վոր իրենց անպատասխանատվությունը, սպառողի որինական պահանջները հաշվի առնել չցանկանալը առաջ է բերում կոոպերատիվ ցանցում զանազան հիվանդագին յերևույթներ—արհամարհանք դեպի ռացիոնալիզատորական ձեռնարկումները, ապարատի աղտոտում և այլն:

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՄԱՆ ԹԵԼԱԴՐՈՎ

«Մրցումն արթնացնելով մասսաների ստեղծագործական յեռանդն ու նախաձեռնությունը, պետք է դառնա աշխատավորներին սոցիալիստական շինարարության մեջ քաշելու մշտական մեթոդը»: XVI կուսկոնֆերենցիայի դիմումի այս բառերը ամբողջովին և լրիվ կերպով վերաբերում են սպառողական կոոպերացիային: Այժմ մենք տեսնում ենք, վոր կոոպերատիվ ճակատի առանձին բնագավառներում ավելի և ավելի է ծավալվում սոցիալիստական մրցումը: Միմյանց հետ

մրցում են առանձին կոոպերատիվները, կոոպերացիան մրցում է ֆաբրիկաների և գործարանների հետ։ Վերջապես արհմիությունները մրցման պայմանագիր են կապում առանձին բանվորական կոոպերատիվների հետ։

Սոցիալիստական մրցումն առանց իրենց՝ մասսաների լայն մասնակցության միտք չունի, այդ շինարարությանը պետք է մասնակցեն վոչ միայն խանութային գործակատարները, այլև իրենք՝ փայատերերը։ Փայատերերը մրցմանը պետք է օգնեն թե կոնկուրսի միջոցով, թե բողոքների գրքերի քննությամբ, թե դասեր կազմելով և այլն։ Այն ամենը, ինչի մասին վոր վերը խոսեցինք, ըստ եյության հանդիսանում է իբրև փայատերերի՝ սոցիալիստական մրցության մեջ ունեցած ակտիվ մասնակցության ձևեր թե կոոպերացիայի ներսում և թե կոոպերատիվների ու արհմիությունների և ձեռնարկությունների միջև։

Հարցն այդպես դնել կնշանակի, վոր փայատերերը գործով անցել են իրենց կոոպերատիվ ապարատի ամրացմանը, առանց վորի մանրածախս գների իջեցումը և ռեալ աշխատավարձի բարձրացումը միտք չունի։

Նույնը պետք է ասել նաև արշավների վերաբերյալ։ Արշավների մասնակիցները վերջիվերջո նույն սպառողներն են, վորոնք ամբողջովին շահագրգռված են կոոպերատիվ ապարատի օղակների բարելավմամբ։ Այսպիսով կոոպերացիայի հասարակական ստուգման մեր թված ձևերը հանդիսանում են սոցիալիստական մրցման անհրաժեշտ տարրեր։

Առանձին կոոպերատիվների միջև տեղի ունեցող մրցման պայմանագրերի հիմնական պայմանն է գնե-



րի իջեցումը, ապարատի ռացիոնալացումը, կոոպերացիայի միջոցով ավելի շատ բանվորական բյուջե ընդգրկել և այլն։

Կոոպերատիվների միջև տեղի ունեցող մրցությունն արդեն վորոշ արդյունքներ ունենում է։ Ահա որինակ, ինչ են ձեռք բերել Մուրմանսկի յերկաթուղու տրանսպորտի սպառողական ընկերությունները, վորոնք մրցում են Արևմտյան յերկաթուղու տրանսպորտի սպառողական կոոպերացիայի հետ։ Մուրմանսկի յերկաթուղու 118 կայարաններից մրցությանը մասնակցել են 60-ը, վորոնք ընդգրկում են ամբողջ փայատերերի չորս հինգերորդ մասը և 125-ից 109 առևտրական ձեռնարկությունները։ Փայատերերի թիվը 1929 թ. ապրիլի 1-ից մինչև նոյեմբերի 1-ն ավելացել է 8 տոկոսով. միության բոլոր անդամներից ճանապարհի վրա կոոպերացված է 98 տոկոսը։ Փայաբաժնի կապիտալն աճել է 65 տոկոսով, իսկ միջին փայաբաժինը՝ 12 ռ. 74 կ. մինչև 17 ռ. 79 կ.։ Վարչա-ղեկավարման ծախսերը պակասել են 4 տոկոսով։ Կիսամյա շրջանառությունը ընդլայնելու պայմանավո-
րությունը գերակատարված է 12 տոկոսով։

Այս փոքրիկ որինակը ցայտուն կերպով ցույց է տալիս, թե ինչ մեծ նշանակություն ունի սոցիալիստական մրցումը կոոպերացիայի համար։ Անհրաժեշտ է մանրամասն կանգ առնել ֆաբրիկաների ու գործարանների և կոոպերացիայի միջև տեղի ունեցող մրցման վրա։ Այս մրցումը սկսել են Մոսկվայի և Լենինգրադի բանվորները։ Նրանց նախաձեռնությունն անհրաժեշտ է տարածել ամբողջ Խորհրդային Միության վրա։ Հնգամյակի կատարումը պահանջում է, վոր կո-

յուրաքանչյուր բանվոր կարողանա իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել սոցիալիստական շինարարությանը։ Անհրաժեշտ է ամեն կերպ պաշտպանել բոլոր ֆաբրիկաներում և գործարաններում բանվորական մասսաների որավուր աճող խանդավառությունը։

Այդ պահանջում է արհկազմակերպություններից, կոոպերատիվներից և տնտմարմիններից՝ բանվորական մատակարարման և բանվորական մասսաներին սպասարկելու կոոպերատիվների աշխատանքի բարելավման հարցերին հատուկ ուշադրություն դարձնել։ Ձեռնարկությունների և արհմիությունների միջև տեղի ունեցող մրցման պայմանագրերը գործնական միջոց են կոոպերացիայի աշխատանքը բարելավելու լայն կոոպերատիվ հասարակայնություն կազմակերպելով և կոոպերատիվ ճակատի դանդաղող մասերը բանվորական բրիգադներ ուղարկելով։

Իսկ ինչ պարտավորություններ պետք է իր վրա վերցնի բանվորական կոոպերացիան։

Կոոպերատիվը պարտավոր է արդյունաբերությանը գործարանային գների իջեցման հետևանքով, մասնավորին մանրածախ ապրանքաշրջանառությունից դուրս մղելու, բանվորական գնորդների ընդգրկումը ընդարձակելու և գների ճիշտ քաղաքականություն կիրառելու հետևանքով իջեցնել բյուջետային հավաքածուի արժեքը և դրանով հենց բարձրացնել աշխատավարձի ռեալ մակարդակը։ Վճռականորեն դուրս մղելով մասնավոր առևտուրը, ընդարձակելով բանվորական բյուջեի սպառողական մասի ընդգրկումը (ոչ պակաս քան 15 տոկ.), բանվորական կոոպերատիվը պետք է մասնավորից ազատված առևտրական



շենքերը հատկացնի կոոպերատիվ խանութներին, կրպակներին և այլն։

Բանվորներին սննդամթերքներով լավ սպասարկելու համար կոոպերատիվը պետք է պարտավորություն վերցնի իր վրա ստեղծելու վորոշ քանակությամբ փակ բաշխիչներ (ֆաբրիկա-գործարանային), վորոնցից ապրանքները պետք է բաց թողնել նախապես դրված պահանջներով, կազմակերպելու մանրածախս առևտուր, նախաճաշիկների համար անհրաժեշտ մթերքներ մատակարարելու, առևտրական շենքերի ցանցն իրոք բանվոր սպառողին մոտեցնելու և ապրանքները տները տանելու գործը կազմակերպելու։

Բացի դրանից պայմանագրերը պետք է կոոպերատիվների վրա վորոշ պարտավորություններ դնեն՝ արտադրության մեջ սննդակայանների ցանցն ընդարձակելու համար (ճաշարաններ, նախաճաշարաններ, բուֆետներ)։

Պայմանագրերում հատուկ տեղ պետք է գրավի կոոպերատիվի միջոցով քաղաքամերձ բանջարաբուծության մշակումը, ցանքերի կոնտրակտացիան և կենդանաբուծական տնտեսության կազմակերպումը։

Պայմանագրերը պետք է իրենց մեջ պարունակեն կոոպերացիայի կուլտուր-լուսավորական և կենցաղային գործունեության աճման, մասսայական կոոպերատիվ լուսավորության, գրքերի տարածման, լվացքատների կազմակերպման, կարող և կարկատող արհեստանոցների, վարսավիրանոցների և այլ բաների վերաբերյալ վորոշ առաջադրանքներ։

Սոցիալիստական պայմանագրերը պետք է պարտավորեցնեն կենտրանկոոպին՝ առևտրի տեխնիկայի

ռացիոնալացման, նորմերի վերացման վերաբերյալ և այլն կատարելու վորոշ առաջադրանքներ։ Պայմանագրերի մեջ պետք է մտցվեն՝ կոոպերատիվ ապարատի առաջքաշման և բանվորականացման, առևտրա-կոոպերատիվ աշխատողների հասարակական-քաղաքական ու տեխնիկական վերավորակավորման և պատրաստման ձեռնարկումների կիրառման պայմանները։

Հատկապես անհրաժեշտ է պայմանագրերում բացատրել աշխատանքային կարգապահության ամրացումը, այսինքն միանգամայն վերջ տալու ուշացումներին, աշխատանքի դուրս չգալուն և այլն։

Կոոպերատիվները պետք է պարտավորություն վերցնեն իրենց վրա ամբողջովին արմատախիլ անելու այնպիսի խայտառակ յերևույթները, ինչպիսին են՝ կեղծարարությունները, գողությունները, ապրանքի պակասումները, ապրանքների բնական փտումների հնարավոր կրճատումը և այլն։

Իհարկե պայմանագրի մեջ, իբրև անհրաժեշտ պայման, պետք է մտցնել առևտրական շրջանառության, բնակչության կոոպերացման և փայերի հավաքման վերաբերյալ հիշյալ թվերը ժամանակին կատարելը։

Ահա սրանք են մոտավորապես սոցիալիստական պայմանագրի կետերը։ Տեղական աշխատողների նախաձեռնությունից է կախված այդ պայմանների լրացումն ու ճշգրտումը։

Իր կողմից ֆաբրիկան կամ գործարանը իրենց վրա յեն վերցնում կատարելու և գերակատարելու արտադրական ծրագիրը, իջեցնելու արտադրանքի ինքնարժեքը, բարձրացնելու նրա վորակը, բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը և ամրացնելու աշխատանքային կարգապահությունը։

Կոոպերատիվ աշխատանքի բնագավառում ֆաբրիկան պետք է իր վրա պարտավորություն վերցնի



ակտիվ կերպով պաշտպանելու կոոպերատիվի բոլոր ձեռնարկումները՝ առաջին հերթին մասնավորին գործարանի ռայոնից վտարելու, առաջներում մասնավոր առևտրին պատկանող շենքերը կոոպերացիայի միջոցով օգտագործելու վերաբերյալ։ Պայմանագրում անհրաժեշտ է նախատեսել ֆաբրիկայի պարտավորությունը՝ փակ բաշխիչների (ֆաբրիկայի ներսի ճաշարանների և կենցաղային զանազան հիմնարկությունների) համար կոոպերատիվին շենքեր հատկացնելու վերաբերյալ։

Կոոպերատիվ ապարատի բանվորականացման բնագավառում ֆաբրիկան պետք է պատասխանատու ղեկավար կոոպերատիվ աշխատանքի համար առաջքաշի վորոշ քանակի բանվորներ, բանվորուհիներ և բանվոր յերիտասարդություն, ամրացնի կոոպերատիվ հասարակայնության մարմինները ձեռնարկության մեջ, մեծացնի կոոպերատիվ ակտիվի շարքերը, քաշի ձեռնարկության մեջ աշխատող բոլոր փայատերերին կոոպերացիայի հաշվետու-վերընտրական կամպանիայի մեջ։ Պայմանագրով պետք է նախատեսվի նաև ձեռնարկության շեֆությունը կոոպերատիվի վրա։

Պայմանագիրը կնքելուց առաջ ֆաբրիկայի կամ գործարանի բանվորների և կոոպերացիայի—վարչության և վերստուգիչ հանձնաժողովի—աշխատանքների, ինչպես և համապատասխան արհկազմակերպությունների ներկայացուցիչների միասնական խորհրդակցությանը պետք է հիմնովին մշակել մրցության պայմանները։ Նշված կետերը պետք է այնուհետև լայն քննության յենթարկվեն թե ձեռնարկության և թե կոոպերատիվի ընդհանուր և ցեխային ժողովներում։ Յերբ պայմանագիրը լայն կերպով քննության է առնված և մշակված է, յերկու կողմերն ընտրում են իրենց լիազորներին այդ պայմանագիրը վերջնականապես ստորագրելու համար։ Պայմանագրի ստորագրումը չպետք

է տեղի ունենա հատուկ ժողովում՝ բանվորների և խանութային գործակատարների մասնակցությամբ։ Ցեխե բանվորական կոոպերատիվի գործունեության շրջանում կան մի քանի խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, վորոնց այդ կոոպերատիվն սպասարկում է, կոոպերացիայի հետ մրցման մեջ են մտնում այդ բոլոր ֆաբրիկաները. ըստ վորում այս կամ այն գործարանին վերաբերող փոխադարձ պարտավորությունները առանձնապես մեկնաբանվում են ընդհանուր պայմանագրերի մեջ։

Պայմանագրի կնքման ժամկետը համարվում է մեկ տարի։ Նրա փոխադարձ ստուգումը պետք է տեղի ունենա յեռամսյակներին, այնպես վոր պայմանագրի ամբողջ ժամկետն անցնելուց հետո կարելի լինի վերջնական արդյունքի հասնել։ Ստուգումը պետք է կատարեն առանձին բրիգադները և ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովները, վորոնց մեջ պետք է մտցվեն ֆաբրիկաների և գործարանների ու կոոպերատիվների ներկայացուցիչները։ Ստուգումների արդյունքները պետք է լայն քննության առարկա դարձնել բանվորների և կոոպերատիվ ապարատի ու կոոպերատիվ ակտիվի ընդհանուր ժողովներում։ Իհարկե մրցման ընթացքի մշտական լուսաբանության համար պետք հրապարակ քաշել մամուլն ու պատի լրագրերը,

Մեզ մոտ դեռևս ձեռնարկությունների և կոոպերացիայի միջև մրցման փորձ գոյություն չունի։ Այժմ, գործը նոր է, վորը վորոշ ժամանակ է պահանջում, վորպեսզի կարելի լինի վերջնական արդյունքների հասնել։ Սակայն այդ արդյունքները համենայն դեպս դրական կլինեն, յեթե յերկու կողմերն էլ իրենց վրա վերցրած պարտավորություններին վերաբերվեն վորպես սոցիալիստական շինարարության աշխատավորներ, և վոչ թե կապալառուի, ձևական և չինովնիկական յեղանակով։ Համենայն դեպս, «Կրասնիյ Պուտիլովեց»-ը, «Ռաբոչիյ» ֆաբրիկան, «Սևկաբել»-ը, «Կրասնիյ Ակսայ»-ը, «Բոգատիր»-ը, —մեկ կողմից և «Կոմմունար», Խամովնիկյան ու Սոկոլնիկյան սպառողական ընկերության կոոպերատիվները, Լենինգրադի Մոսկվա-Նարվայի և Վոլոդարսկի ռայոնների կոոպերատիվները, ինչպես և Ռոստով-Նախիջևանի միասնական սպառողական ընկերությունը մյուս կողմից միմյանց հետ մրցության մեջ մտնելով, պետք է որինակ հանդիսանան, թե ինչպես պետք է մասսաների աշխատանքային արշավ կազմակերպել յեվ կատարել, ինչպես պետք է ծավալել մրցումը ֆաբրիկաների յեվ գործարանների ու կոոպերացիայի միջեվ։



Վերջինս այնքան ավելի հեշտ կարող է կատարել իր պայմանները, վորքան ավելի շատ փայատերեր և խանութային գործակատարներ մրցման մեջ քաշվեն, վորքան մեր կոոպերացիան ավելի շատ անցնի հարվածային տեմպերի, վորքան ավելի շատ հարվածային բրիգադներ, հարվածային կրպակներ և խանութներ կազմակերպվեն կոոպերատիվ ցանցում։

Սոցիալիստական մրցումը պետք է ընդգրկի սպառողական կոոպերացիայի բոլոր ողակները։ Պետք է կատարել Համ. Կ (բ) Կ Կ Կ-ի 1930 թ. մայիսի 15-ի հետևյալ վորոշումը՝ «Պարտավորեցնել կուսակցական և արհեստակցական բոլոր կազմակերպություններին հատուկ ուշադրություն դարձնել կյանքում կիրառելու սոցիալիստական մրցումը սպառողական կոոպերացիայի սիստեմի ներսում՝ առանձին միությունների, ձեռնարկությունների միջև և այլն»։

## ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՑԱՆՑԻ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԸ

Հարվածայնությունը կոոպերացիայի ներսում առայժմ թույլ է։ Մինչդեռ ձեռնարկությունները մեկը մյուսից հետո անցնում են աշխատանքի հարվածային տեմպերի, մինչդեռ հարվածայինների լենինյան հավաքը արդյունաբերության և տրանսպորտի մեջ սոցիալիստական շինարարության ճակատում արդեն մեկ

միլիոնից ավելի նոր մարտիկներ են տվել, հարվածայնությունը կոոպերացիայում ծավալված է միանգամայն անբավարար չափով։

Այդ առավել ևս տարօրինակ է, որովհետև կոոպերացիայում բոլոր պայմանները կան հարվածային բրիգադների աճման և բարձր աստիճանի մրցման անցնելու համար։ Հարվածայինների Համամիութենական առաջին համագումարը շեշտեց սպառողական կոոպերացիայում հարվածային բրիգադների աճման ամբողջ անհրաժեշտությունը։

Ներկայումս, յերբ մեր կոոպերատիվները պարտավոր են պայքար մղել աշխատանքը լավ հիմքերի վրա դնելու, ռացիոնալիզատորական ձեռնարկումներ կիրառելու, սպառողին կանոնավոր և անընդհատ կերպով առաջին անհրաժեշտության առարկաներ մատակարարելու համար, խանութային գործակատարները պետք է լուրջ կերպով մտածեն հարվածային բրիգադներ կազմակերպելու մասին։

Արտադրական ծրագրի գերակատարումը արդյունաբերության մեջ և տրանսպորտում ներկայումս առանց հարվածայնության միտք չունի։ Նույնը ամբողջովին պետք է ասել նաև կոոպերացիայի մասին։ Մենք տեսանք, որ կոոպերատիվի բնագավառում մենք ունենք լուրջ ճեղքվածք, որ հնգամյակի յերկրորդ տարվա ծրագիրը գերակատարել կարելի է միմիայն կոոպերատիվ աշխատողների բոլոր ուժերի լարումով։ Յեվ քանի որ այդպես է, մեր կոոպերացիան պետք է անցնի հարվածային տեմպերի, պետք է ծավալի սոցիալիստական մրցում, որն առանց հարվածային բրիգադների ամենալայն կազմակերպման իմաստ չունի։

Այդ բանը պրոֆեսիոնալ կազմակերպությունների, առաջին հերթին կոոպերատիվ ձեռնարկությունների, խանութների, կրպակների և այլ տեղկոմների



գործն է։ Արհեստակցական միությունները հանդիսանում են իբրև սոցիալիստական մրցման ղեկավարներ։ Նրանց ուղղակի պարտականությունն է հաստատուն կերպով անցնել կոոպերացիայում հարվածային բրիգադներ ստեղծելու, այդ հարվածային բրիգադներին մշտապես ղեկավարելու, նրանց աշխատանքի հաշվառման և այլ գործին։

Այդպիսով և միմիայն այդպիսով մենք կմտնենք «քաղաքակիրթ կոոպերատիվների հասարակարգ» ստեղծելուն, կկատարենք Վլադիմիր Իլյիչի ավանդը ամբողջ բնակչությանը լիակատար կոոպերացման յենթարկելու և կսովորենք կուլտուրական յեղանակով առևտուր անել։ Ինքը կոոպերացիան, որպես միլիոնավոր փայատերերին միացնող հասարակական հզոր կազմակերպություն, պետք է դեպի մրցության յենթակա խանութները, կրպակները, առանձին հարվածային բրիգադներն ուշադիր և զգայուն վերաբերմունքի օրինակ ծառայի։ Այդ ամենի կատարումը կհանդիսանա՝ աշխատավարձի ռեալ մակարդակը ոչ պակաս քան 12%-ով բարձրացնելու մասին կուսակցության Կենտրոնական Կոմիտեի նոյեմբերյան պլենումի ունեցած դիրեկտիվների հաջող կատարման յերաշխիք։

## ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԱՊԱՐԱՏԸ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Այդ խնդիրը կարելի է կատարել այն դեպքում միայն, յեթե բանվորական կոոպերացիայի բոլոր փայատերերը այդ պայքարում ամենակենդանի և անմիջական մասնակցություն ունենան։ Մենք քննության առանք սպառողների ամենալայն մասսաների գործունեության զանազան ձևերը։ Հասկանալի է, որ դրանով բնավ չեն սպառվում կոոպերացիայի աշխատանքի բարելավման և նրա ողակների ամրացման գործում աշխատավոր մասսաների ունեցած մասնակցության բոլոր միջոցները։ Վորոշ տեղերում թերևս գտնվեն

ավելի կատարելագործված և ճկուն տեսակի այլ միջոցներ։

Մեր նպատակն է պարզել, թե ինչպես ինքը սպառողը կարող է և պետք է ամենօրյա հսկողություն ունենալ կոոպերատիվների աշխատանքի վերաբերյալ։ Մեջ բերված օրինակներով մենք աշխատեցինք ցույց տալ, ինչի կարելի է հասնել այս կամ այն ձևի գործադրումով։ Այդ ձևերն ստուգված են գործնականում և այդ պատճառով կարելի է դրանց հանձնարարել մեր կոոպերատիվ և արհեստակցական աշխատավորներին։ Յեվ իրոք, յեթե «Տվերսկայա պրավդա»-ի կազմակերպած կոոպերատիվ կոնկուրսները նպաստել են վոչ միայն կոոպերատիվ աշխատողների վորակի բարձրացմանը, այլ և բարձրացրել են առևտրական շրջանառությունները, ավելացրել են փայատերերի թիվը, ինչու այդ կոնկուրսները չանցկացնել նաև այլ քաղաքներում։ Այստեղ ամբողջ գործը կախված է մեր հասարակական կազմակերպությունների նախաձեռնությունից և յեռանդից, վորոնք պետք է լրջորեն զբաղվեն ամբողջ կոոպերատիվ ապարատի բարելավմամբ։

Մենք նկատել ենք մի քանի արհմիությունների կողմից բավական սառը վերաբերմունք դեպի բանվորական բրիգադները, վորոնք ուղարկված են ցեղել կոոպերատիվ ցանցն ստուգելու։ Պարզ է, վոր այդպիսի վերաբերմունքի դեպքում հեռուն գնալ չես կարող. այդպիսի դեպքում կոոպերատիվ ապարատը բարելավել չես կարող, չես կարող նրան լիակատար մարտական պատրաստության դրության մեջ դնել։ Իսկ այս վերջինն անելն անհրաժեշտ է։

Մեր կուսակցության նախատեսած տեմպերը, հնգամյակի յերկրորդ տարվա ծրագիրը, առաջին յեռամսյակի հայտաբերած ճեղքվածքը՝ պահանջում են մոբիլիզացիայի յենթարկել բանվոր դասակարգի և նրա



կազմակերպությունների բոլոր ուժերը արտադրական ծրագրերը կատարելու համար։ Այդ, իհարկե, վերաբերում է վոչ միայն ֆաբրիկաներին, գործարաններին և յերկաթուղիներին, այլ և կոոպերացիային։ Մենք արդեն բազմիցս մատնանշել ենք, վոր նա հենց առաջին հերթին իր վրա չի կրում աշխատավարձի ռեալ մակարդակը բարձրացնելու պատասխանատվությունը։ Իսկ այդ բարձրացումը ընդհանրապես հանդիսանում է ամբողջ հնգամյա պլանի և նրա տարեկան առանձին մասերի բաղկացուցիչ և անբաժան մասը։

Վլադիմիր Իլյիչն ընդգծել է, վոր մեզ անհրաժեշտ է ամբողջ բնակչության անխտիր մասնակցությունը կոոպերացիային, մեզ անհրաժեշտ է, վոր մեր բնակչությունը կարգավորի այդ մասնակցությունը։ Հասկանալի յե, վոր Վլադիմիր Իլյիչը բնավ չի յենթադրել և չի կարծել, վոր այդպիսի մասնակցությունը չի նշանակում միմիայն ավտոմատ կերպով անդամավճարներ տալ։ Այդպիսի մասնակցությունը միանգամայն անպետք է, քանի վոր հանդիսանում է իբրև կազյոնի պարտականություն։ Ամբողջ բնակչության անխտիր մասնակցությունը կոոպերացիային այն պետք է լինի, վոր այդ բնակչությունը (իսկ վերջինիս տակ պետք է հասկանալ, իհարկե, աշխատավոր մասը) ակտիվ աշխատանք կատարի իր կոոպերատիվն ամրացնելու համար։ Այդպիսի աշխատանք կատարել ժամանակակից պայմաններում, նշանակում է ամենից առաջ ռացիոնալիզական մրցումը ծավալել, գործադրել մասսայական ստուգման զանազան ձևեր և մեթոդներ, վորոնք կարող են կոոպերացիային բավականաչափ օգտակար լինել։

Վլադիմիր Իլյիչն ասել է. «Բոլորին պարզ է, վոր ներկայումս պրոլետարիատի գլխավոր խնդիրն է լավ կարգավորել մթերքների հայթայթման և բաշխման գործը։ Անհրաժեշտ է, վոր հայթայթման աշխատանքի

մեջ քաշվեն ամենաառաջին խավերը. այդ պետք է լինի բանվորական կոոպերացիայի գլխավոր խնդիրը։

Իլյիչի այդ պատգամը և կուսակցության դիրեկտիվը կատարելու համար կոոպերացիան պետք է դուրս մղի իր ապարատից այն ամենը, ինչ խորթ է, ինչ անպետք է, ինչ լճացած է և բյուրոկրատական։ Իսկ դրան հասնել կարելի է միայն այն դեպքում, յերբ միլիոնավոր մարդիկ շարժվեն, յեթե այդ միլիոնավորները մշտական մասսայական հսկողության և հասարակական ստուգման յենթարկեն կոոպերատիվ ապարատի բոլոր ողակները։

Պետք է առանց այլևայլության կատարել կուսակցության՝ Համ Կ(բ)Կ ԿԿ-ի 1930 թ. մայիսի 15-ի վորոշումով պարզորոշ կերպով առաջադրած հետևյալ դիրեկտիվը. «Պարտավորեցնել կուսակցական բոլոր կազմակերպություններին ուժեղացնելու սպառկոոպերացիայի աշխատանքի ղեկավարումը. զգալի բեկում կատարել նրա աշխատանքում, վորպեսզի կարելի լինի ապահովել կուսակցության և կառավարության առաջացած պլանի քանակական և վորակական ցուցանիշների կատարումը. ուժեղացնել կոմունիստական խավը կոոպերացիայի բոլոր ողակներում. բարձրացնել կուսակցական և արհեստակցական հասարակայնությունը՝ ստուգելու և բարելավման յենթարկելու կոոպերացիայի աշխատանքը և նրա ապարատի կազմը, կազմակերպելով լայն առաջքաշման աշխատանք, մոբիլիզացիայի յենթարկելով բանվորական ակտիվությունը, կիրառելով մասսայական վերահսկողության պարբերական ձևերը, մանավորապես բանվորական բրիգադների միջոցով կոոպերատիվ աշխատանքի ստուգում կազմակերպելով։

ՀԱՆՐԱՅԻՆ Գ[redacted] Гос. Пуб[redacted] ՀՍԽՀ — ССРА им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0044562

2 1 3.-

ԳԻՆԸ 20 ԿՈՊ. ($2\frac{1}{2}$ մ.)

А. КАФМАН

# РАБОЧУЮ КООПЕРАЦИЮ — ПОД КОНТРОЛЬ МАСС

Госиздат ССР Армении
Эривань 1931